

## ՑԱՆԿ

Առաջաբան.....	3
<b>Գլուխ I. Տեղամասային ընտրական հանձնաժողով.....</b>	<b>4</b>
Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների ժամկետը.....	4
Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձինք.....	4
Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը.....	5
Տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցման մատյանը.....	6
<b>Գլուխ II. Ընտրողների ցուցակները.....</b>	<b>8</b>
<b>Գլուխ III. Ընտրողի քարտ.....</b>	<b>10</b>
<b>Գլուխ IV. Քվեարկության շինության կարգավորումը.....</b>	<b>10</b>
<b>Գլուխ V. Մարզային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթերի եւ ընտրական գույքի ստացումը.....</b>	<b>11</b>
Ընդունման-հանձնման ակտը.....	13
<b>Գլուխ VI. Քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձինք.....</b>	<b>14</b>
Դիտորդների իրավունքները.....	14
Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը.....	15
Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների .....	15
Ներկայացուցիչները.....	15
<b>Գլուխ VII. Մինչեւ քվեարկությունը իրականացվելիք միջոցառումները .....</b>	<b>16</b>
Վիճակահանություն.....	16
Ընտրողների թվաքանակի հրապարակումը.....	17
Ստացված քվեաթերթիկների եւ հատուկ ծրարների քանակի հրապարակումը.....	18
Քվեարկության արարողության համար անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումը հանձնաժողովի անդամներին.....	18
Քվեատուփի կնքումը.....	18
<b>Գլուխ VIII. Քվեարկության ընթացակարգը .....</b>	<b>20</b>
Քվեարկությանը մասնակից ընտրողների գրանցումը.....	21
<b>Գլուխ IX. Քվեարկության ընթացակարգի բացառիկ դեպքերը.....</b>	<b>23</b>
1) Ընտրողը գրանցված չէ ընտրողների ցուցակում.....	23
2) Ընտրողին պահանջվում է օգնություն քվեաթերթիկի լրացման ժամանակ.....	23
3) Ընտրողի/հանձնաժողովի անդամի մոտ քվեաթերթիկը փչացավ.....	23
4) Քվեարկության դադարեցում.....	23
5) Խախտվել է քվեատուփի ամբողջությունը.....	23
6) Քվեարկությունը ավարտվեց ժամանակից շուտ.....	24
<b>Գլուխ X. Տեղափոխվող քվեատուփի միջոցով ձայն տալը.....</b>	<b>24</b>
<b>Գլուխ XI. Քվեարկության օրը կարգուկանոնի պահպանումը քվեարկության շինությունում.....</b>	<b>25</b>
<b>Գլուխ XII. Ընտրական տեղամասի փակումը.....</b>	<b>25</b>
<b>Գլուխ XIII. Մինչեւ քվեատուփի բացումը իրականացվելիք միջոցառումները.....</b>	<b>26</b>
<b>Գլուխ XIV. Քվեատուփի բացումը.....</b>	<b>28</b>
<b>Գլուխ XV. Քվեաթերթիկների տեսակավորումը, հաշվարկումը եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության ձեւակերպումը.....</b>	<b>29</b>

<b>Գլուխ XVI. Ընտրական փաստաթղթերի քուղակապումը եւ կնքումը.....</b>	<b>34</b>
<b>Գլուխ XVII. Քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության հաստատումը.....</b>	<b>35</b>
<b>Գլուխ XVIII. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից մարզային ընտրական հանձնաժողովին ընտրական փաստաթղթերի հանձնումը.....</b>	<b>36</b>
<b>Գլուխ XIX. Քվեարկության օրվա դիմումներն ու բողոքները.....</b>	<b>37</b>
Դիմումներ եւ բողոքներ քվեարկության ընթացքում հայտնաբերված խախտումների կապակցությամբ.....	37
Դիմումներ եւ բողոքներ ձայների հաշվարկման եւ քվեարկության արդյունքների հանրագումարման ժամանակ խախտումների կապակցությամբ.....	37
<b>Գլուխ XX. Հանձնաժողովի անդամների իրավունք-պարտականությունները.....</b>	<b>39</b>
Ընտրողների հոսքի կարգավորողը.....	39
Ընտրողների գրանցողը.....	40
Քվեատուփը եւ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամը.....	41
Տեղափոխվող քվեատուփի ուղեկցորդները.....	42
Հանձնաժողովի նախագահի տեղակալը.....	44
Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը.....	45
Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.....	47
<b>Գլուխ XXI. Վրաստանի ընտրական օրենսդրության խախտումների համար սահմանված պատասխանատվությունը.....</b>	<b>50</b>
Վրաստանի քերական դատավարական օրենսգիրք.....	50
Վրաստանի վարչարարական օրինախախտումների օրենսգիրք.....	51

## ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն ձեռնարկը մշակվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար եւ բովանդակում է քվեարկության ընթացակարգը ընտրական օրենսգրքին համապատասխան անցկացնելու համար անհրաժեշտ հանձնարարականներ.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների օգնական ձեռնարկը կոյուրացնի ընտրական հանձնաժողովի անդամների կողմից ընտրական ընթացակարգի անցկացումը՝ օրենսդրության շրջանակներում. Ընտրական ընթացակարգի բոլոր միջոցառումները՝ մինչեւ քվեարկությունը, քվեարկության օրը եւ քվեարկությունից հետո, ներկայացված են փուլ առ փուլ.

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ընտրությունների տեսակը** - տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի ընտրություններ.

**Ընտրական օրենսդրությունը** - Վրաստանի ընտրական օրենսգիրքը, ԿԸՀ-ի որոշումները, կարգադրությունները, մարզային ընտրական հանձնաժողովի կարգադրությունները, ընտրական վարչության կանոնակարգը.

**Ձայն տալ կարող է** - ընտրողը, ընտրական ակտիվ իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին, ում 18 տարին լրացել էր (կամ լրացավ) քվեարկության օրվա համար եւ գրանցված է ընտրողների ցուցակում.

**Ընտրություններին կարող է մասնակցել** - ընտրական սուբյեկտ՝ կուսակցությունը, ընտրական դաշինքը, կուսակցության, ընտրական դաշինքի, ընտրողների նախաձեռնողական խմբի կողմից ներկայացված թեկնածուն, որն գրանցված է համապատասխան ընտրական հանձնաժողովում.

## **ՉԼՈՒԽ I. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Տեղամասային ընտրական հանձնաժողովը հանդիսանում է Վրաստանի ընտրական վարչության ժամանակավոր տարածքային մարմինը, որն իր լիազորությունների շրջանակներում, ընտրական տեղամասի տարածքում ապահովում է ընտրությունների օրինական անցկացումը, ընտրական օրենսդրությամբ սահմանված քվեարկության ընթացակարգի ընթացքը, ընտրողների, ընտրական սուբյեկտների, նրանց ներկայացուցիչների եւ դիտորդների իրավունքների պաշտպանությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը բաղկացած է 9 անդամից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի 3 անդամներին ընտրում է մարզային ընտրական հանձնաժողովը, երկուական անդամներ նշանակում են Վրաստանի խորհրդարանի վերջին ընտրություններին առաջին երեք տեղերը զբաղեցրած կուսակցությունները: Վերոնշյալ կուսակցությունները նաեւ նշանակում են տեղամասային ընտրական հանձնաժողովի երկուական պահեստային անդամների, որոնք տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությանը մասնակցում են միայն քվեարկության օրը:

### **ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները ուժի մեջ են մտնում հանձնաժողովի առաջին գումարման օրը եւ ավարտվում են ընտրական տեղամասում օրենքով նախատեսված ողջ ընթացակարգի եզրափակմամբ:

Չի թույլատրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի ետկանչումը քվեարկությունից 15 օր շուտ:

### **ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁԻՆՔ**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նաագահին, նախագահի տեղակալին եւ հանձնաժողովի քարտուղարին անդամների լիազորությունների ժամկետով ընտրում է համապատասխան հանձնաժողովը՝ իր անդամների առաջին նիստում, լրիվ կազմի մեծամասնությամբ, անվանական քվեարկությամբ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց առաջադրելու իրավունք ունեն հանձնաժողովի առնվազն երկու անդամներ:

Միեւնույն թեկնածուի առաջադրումը թույլատրելի է միայն երկու անգամ:

Եթե սահմանված ժամկետում չեն ընտրվում ընտրական հանձնաժողովի նախագահը/ նախագահի տեղակալը/քարտուղարը, նշյալ պաշտոնատար անձանց պարտականությունները, մինչեւ դրանց ընտրությունը, կատարում է հանձնաժողովի այն անդամը, ով ընտրություններում կհավաքի ձայների մեծամասնությունը, իսկ ձայների հավասարության դեպքում՝ նրանցից վիճականությամբ որոշված անձը:

### **Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.**

- Իրականացնում է վարչարարական բոլոր գործառույթները տեղամասային ընտրական հանձնաժողովում;
- Գումարում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերը;
- Ընդունում եւ բաժանում է տեղամասային ընտրական հանձնաժողովին տրված ընտրական փաստաթղթերը եւ տեղամասային ընտրական հանձնաժողովի հասցեով ստացված թղթակցությունը;
- Անձնական պատասխանատվություն է կրում քվեաթերթիկների, հատուկ ծրարների, հանձնաժողովի կնիքի, հանրագումարային արձանագրության, վերահսկիչ թերթիկի եւ ընտրական այլ փաստաթղթերի պահպանման եւ ըստ նշանակության հանձնման համար;
- Քվեարկության օրը կազմակերպում է հանձնաժողովի անդամների միջեւ գործառույթների բաժանման վիճակահանությունը;

- Պատասխանատվություն է կրում քվեարկության օրը ընտրական տեղամասի շինությունում եւ մերձակա տարածքում կարգուկանին պահպանման համար;
- Քվեարկության արդյունքների հանրագումարումից անմիջապես հետո, մարզային ընտրական հանձնաժողովին է հանձնում ընտրական բոլոր փաստաթղթերը;
- Իրականացնում է ընտրական օրենսդրությամբ իրեն տրված մյուս լիազորությունները.

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը.**

- Իրականացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պարտականությունները, եթե հանձնաժողովը չունի նախագահ կամ նա չի կարող կատարել իր պարտականությունները;
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ իրականացնում է հանձնաժողովի նախագահի առանձին գործառույթները (կարգադրությամբ հստակորեն պետք է սահմանվեն տրվող լիազորությունների շրջանակներն ու ժամկետը).

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը.**

- Նախապատրաստում է հանձնաժողովի կարգադրությունների նախագծերը;
- Իրականացնում է հանձնաժողովում ընտրական փաստաթղթերի, դիմումների, բողոքների ընդունումը, հանձնումը եւ հաշվարկում-գրանցումը;
- Պարտավոր է լրացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցման մատյանը եւ քվեարկության օրվա գրանցումների գիրքը;
- Պատասխանատվություն է կրում հանրային տեղեկատվության հանձնման համար;
- Կազմում է ընտրական հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, այդ թվում քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունը եւ անհրաժեշտության դեպքում՝ ուղղում է արձանագրությունը;
- Իրականացնում է ընտրական օրենսդրությամբ իրեն տրված լիազորությունները.

Ընտրական հանձնաժողովի անդամը չի հանդիսանում իրեն նշանակած/ընտրած սուբյեկտի ներկայացուցիչը եւ նրա շահերի պաշտպանը. Նա իր գործունեությունում անկախ է եւ ենթարկվում է միայն Վրաստանի Սահմանադրությանն ու ընտրական օրենսդրությանը. Ցանկացած ճնշում ընտրական հանձնաժողովի անդամի վրա կամ միջամտությունը նրա գործունեության մեջ, արգելված է եւ պատժվում է օրենքով.

**ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը դռնբաց է.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեն.

- Տեղամասային, մարզային եւ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներն եւ աշխատակազմի աշխատակիցները,
- Ընտրական սուբյեկտների մեկական ներկայացուցիչ,
- Միջազգային եւ տեղական դիտորդական կազմակերպությունների մեկական ներկայացուցիչ,
- Մամուլի եւ զանգվածային լրատվության միջոցների հավատարմագրված ներկայացուցիչներ.

Օրակարգի խախտման եւ հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտներ հարուցելու դեպքում, հանձնաժողովը իրավասու է օրակարգը խախտող անձին որոշմամբ հեռացնել նիստերի դահլիճից, որը նշվում է նիստի արձանագրության մեջ.

Նիստերի հաջորդականությունը սահմանում է տեղամասային ընտրական հանձնաժողովը. Անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պահանջով, հրավիրվում է արտահերթ նիստ.

Նիստ հրավիրելու մասին որոշում ընդունելուց անմիջապես հետո, հանձնաժողովի քարտուղարը ընտրական հանձնաժողովում աչքի ընկնող տեղում փակցնում է հայտարարություն՝ նիստի ստույգ

ամսաթվի եւ ենթադրական օրակարգի նշումով. Նախագահի տեղակալը, իսկ նրա բացակայության դեպքում, հանձնաժողովի քարտուղարը, անձնական պատասխանատվություն է կրում նիստի անցկացման ստույգ ամսաթիվը եւ այն սկսելու ստույգ ժամը հանձնաժողովի բոլոր անդամներին տեղեկացնելու համար. Հանձնաժողովի անդամները, նիստին ներկա գտնվելը, վավերացնում են ստորագրելով ներկայության թերթիկը.

Հանձնաժողովի նիստի օրակարգը նախապատրաստում է հանձնաժողովի քարտուղարը. Հանձնաժողովի քարտուղարը նաեւ պարտավոր է նախապատրաստել հանձնաժողովի կարգադրությունների նախագծերը եւ ծանոթանալու համար ներկայացնել հանձնաժողովի անդամներին.

Հանձնաժողովի անդամը իրավունք ունի մինչեւ նիստի օրակարգի հաստատումը պահանջել օրակարգում մտցնել լրացուցիչ հարցեր. Հարցը լուծվում է քվեարկությամբ.

Նիստը վարում է հանձնաժողովի նախագահը կամ, նախագահի հանձնարարությամբ, նրա տեղակալը.

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը չունի նախագահ եւ նախագահի տեղակալ, նախագահի ընտրության համար հանձնաժողովի նիստը իրավիքում եւ մինչեւ նախագահի ընտրությունը այն վարում է հանձնաժողովի քարտուղարը, իսկ եթե հանձնաժողովը չունի քարտուղար, ապա հանձնաժողովի նիստը իրավիքում եւ մինչեւ նախագահի ընտրությունը վարում է հանձնաժողովի ամենատարեց անդամը.

Նիստի իրավագոր է, եթե դրան ներկա է հանձնաժողովի ցուցակային կազմի մեծամասնությունը. Հանձնաժողովի կարգադրությունը (որոշումը) համարվում է ընդունված, եթե այն պաշտպանել է ներկա մեծամասնությունը, սակայն առնվազն հանձնաժողովի ցուցակային կազմի մեկ երրորդը. Ձայների հավասարության դեպքում, որոշիչը նիստի նախագահի ձայնն է.

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը եւ տեղակալը միաժամանակ կամ հանձնաժողովի քարտուղարը ժամանակավորապես չեն կարող կատարել պարտականությունները, որոնք պատկանում են նախագահին կամ քարտուղարին վերապահվող լիազորություններին, ապա տեղական ընտրական հանձնաժողովը իր կազմից առանց հապաղման ընտրում է նախագահի/քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար. Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի լիազորությունները դադարեցվում են, երբ հանձնաժողովի նախագահը կամ նախագահի տեղակալը կկարողանա իրականացնել իր պարտականությունները, իսկ հանձնաժողովի քարտուղարի պաշտոնակատարի լիազորությունները դադարեցվում են, երբ քարտուղարը կկարողանա կատարել իր պարտականությունները.

Նիստում կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են նիստի նախագահը եւ հանձնաժողովի քարտուղարը. Հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմվում է նիստի անցկացումից 2 օրից ոչ ուշ.

Հանձնաժողովի նիստին հարցերի քննարկմանը կարող են իրավիքով շահագրգռված կողմերը. Հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք նիստում խոսքով կարող են ելույթ ունենալ նիստի նախագահի թույլտվությամբ՝ հանձնաժողովի անդամներից հետո. Ելույթի տեւողությունը սահմանում է հանձնաժողովը.

Մարզային ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմումից անմիջապես հետո հանձնում է հանձնաժողովի համարակալված, քուղակապված եւ կնքված գրանցման մատյանը.

## **ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆԸ**

Տեղամասային ընտրական հանձնաժողով մուտք գործած եւ հանձնաժողովից տրված փաստաթղթերի գրանցման եւ համակարգման նպատակով, տեղամասային ընտրական հանձնաժողովում՝ ընտրական տեղամասի ստեղծումից հետո, լրացվում է գրանցման մատյանը. Գրանցման մատյանը բաժանվում է երկու մասի. հանձնաժողով մուտք գործած եւ հանձնաժողովից տրված փաստաթղթերի.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է ընտրությունների ողջ ընթացքում հանձնաժողով մուտք գործած/դուրս տրված ցանկացած փաստաթուղթ (դիմում, բողոք, տեղեկանք) անհապաղ գրանցել մատյանում եւ չընդհատվող հաջորդականությամբ գրանցել դրանց ստացման հերթականությունը, յուրաքանչյուր փաստաթուղթ համարակալել, նշել ստացման ամսաթիվը եւ էջերի քանակությունը.

## **Չիշեցեք.**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից նիստում ընդունված կարգադրությունը պետք է գրանցվի գրանցման մատյանում.

Տեղամասային ընտրական հանձնաժողով մուտք գործած բողոքը կամ դիմումը պետք է գրանցվի հանձնաժողովի գրանցման մատյանում, որտեղ նշվում է դիմորդի/բողոքարկողի ով լինելը. Մատյանում համապատասխան գրանցումից հետո, հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է դիմորդին/բողոքարկողին հանձնել գրավոր տեղեկանք, որտեղ նշվելու է դիմում/բողոքի ստացման ամսաթիվը եւ ստույգ ժամանակը, նաեւ մատյանում դրան տրված համարը. Վերոնշյալ տեղեկանքը հանձնաժողովի քարտուղարը պետք է վավերացնի ստորագրությամբ.

Տեղամասային ընտրական հանձնաժողովից ստացված փաստաթուղթը դիմորդը հաստատում է ստորագրելով գրանցման մատյանում. Իր հերթին, հանձնաժողովի քարտուղարը գրանցում է կատարում. «Փաստաթուղթը հանձնված է» եւ նշում է գրանցման ամսաթիվը եւ ստույգ ժամանակը.

## **Չիշեցեք.**

Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է դիմում/բողոքի ընդունումից 2 օրվա ընթացքում այն քննարկել եւ ընդունել համապատասխան որոշում (բացառություն է կազմում քվեարկության օրը, երբ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պետք է անհապաղ արձագանքի դիմում/բողոքին, եթե խախտումը հաստատվում է, այն վերացնի). Հանձնաժողովի քարտուղարը գրանցման մատյանում գրանցված բոլոր փաստաթղթերը ներկայացնում է հանձնաժողովի նախագահին, որն սեփական եզրակացությամբ դրանք բաժանում է հանձնաժողովի առանձին անդամներին եւ նշում է կատարման ստույգ ժամկետները. Հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է գրանցման մատյանում ճշտությամբ նշել, թե ում է հանձնարարվել այս կամ այն փաստաթղթի արձագանքը.

Ընտրական փաստաթղթերը մատչելի են բոլոր անձանց համար. Ընտրությունների մասին տեղեկատվությունը եւ ընտրական փաստաթղթերի հանձնումը պարտադիր է դրանց պահանջից 2 օր ժամկետում. Հանձնաժողովում հանրային տեղեկատվության հանձնման եւ անձեռնմխելիության համար պատասխանատու անձը հանձնաժողովի քարտուղարն է. Հանձնաժողով մուտք գործած փաստաթղթի բնագրի հանձնումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, արգելված է, իսկ պատճենների պահանջի դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կարող է սահմանվել սակագին՝ պատճենների պատրաստման համար անհաժեշտ գումարի չափով՝ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան.

Ամեն օր, ժամը 18-ին, հանձնաժողովի քարտուղարը փակում է գրանցման մատյանը (բացառություն է կազմում քվեարկության օրը, այդ դեպքում գրանցման մատյանը փակվում է բոլոր փաստաթղթերի հանձնումից հետո). Հանձնաժողովի քարտուղարը մատյանի երկու բաժնում էլ վերջին գրանցումից հետո կատարում է գրառում. «Մատյանը փակված է», նշում է ամսաթիվը, ստույգ ժամանակը եւ ստորագրում է. Մատյանը փակելուց հետո, դրանում այլ գրանցում կատարելը անթույլատրելի է.

Քվեարկության ընթացակարգի ավարտից հետո, ընտրական այլ փաստաթղթերի հետ միասին, գրանցման մատյանը հանձնվում է մարզային ընտրական հանձնաժողովին.

# ՄԻՆՉԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

## ԳԼՈՒԽ II. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Ընտրողների ցուցակների ձեւաթերթերի անվանումներն են.

- Ընտրողների միասնական ցուցակը (սեղանի եւ ընդհանուր պատին փակցելու տեսակները),
- Ընտրողների հատուկ ցուցակը (սեղանի եւ ընդհանուր տեղեկատվության համար նախատեսված տեսակները),
- Ընտրողների ցուցակի հավելվածը (սեղանի եւ ընդհանուր տեղեկատվության համար նախատեսված տեսակները).

### ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ

Մարզային ընտրական հանձնաժողովը ընտրողների միասնական ցուցակը հանձնում է տեղամասային ընտրական հանձնաժողովին՝ վերջինիս առաջին հավաքման օրից ոչ ուշ. Ընդհանուր տեղեկատվության համար նախատեսված տարբերակը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը անհապաղ պետք է փակցնի տեղամասային ընտրական հանձնաժողովի շինության աչքի ընկնող տեղում.

Ընտրական գրանցում ունեցող կուսակցությունը, դիտորդական կազմակերպությունը եւ ընտրողը, իրավունք ունեն ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովում գոյություն ունեցող ընտրողների ցուցակի ընդհանուր տեղեկատվության համար նախատեսված տարբերակի հետ (ընտրողը իրավունք ունի պահանջելու ծանոթանալ միայն իր եւ իր ընտանիքի անդամների մասին առկա բոլոր տվյալներին եւ դրանցում կատարել փոփոխություններ) եւ անճշտության բացահայտման դեպքում, մինչեւ ընտրությունների օրը, առնվազն 23 օր շուտ, պահանջում է փոփոխություններ կատարել ընտրողների տվյալներում եւ ընտրողների ցուցակում.

Տեղամասային ընտրական հանձնաժողովը մուտք գործած դիմումները մինչեւ ընտրությունների օրը, առնվազն 23 օր շուտ, պետք է փոխանցի մարզային ընտրական հանձնաժողովին, որն քննարկում է ստացված դիմումները եւ ընդունում որոշում.

Մարզային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը ընտրողների տվյալներում/ցուցակներում փոփոխություններ չկատարելու մասին, տեղամասային ընտրական հանձնաժողովը կարգադրության ստացման հաջորդ օրվանից, ըստ պահանջի, այն պետք է փոխանցի դիմորդին.

Ընտրողների ցուցակում փոփոխություն կատարելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնվում են ճշտագրված ցուցակների վերջնական տարբերակի 2 օրինակները. Ընդհանուր տեղեկատվության համար նախատեսված տարբերակը փակցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի աչքի ընկնող տեղում.

### ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՑՈՒՑԱԿԸ

Հատուկ ցուցակը կազմում է մարզային ընտրական հանձնաժողովը մինչեւ ընտրությունները, առնվազն մինչեւ 3 օր շուտ եւ անհապաղ փոխանցում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը հատուկ ցուցակում գրանցված ընտրողներին պետք է գտնի ընտրողների միասնական ցուցակում եւ նրանց ազգանվան դիմաց «Փաստացի վիճակը» սյունակում կատարի գրանցում («Նախնական կալանքում է», «Ձինվորական ծառայությունում է» կամ «Հիվանդանոցում է»), ինչն վավերացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի եւ քարտուղարի ստորագրություններով.

Տեղամասային ընտրական հանձնաժողովին նաեւ հանձնվում է տեղեկատվություն այն ընտրողների մասին, որոնք պատկանում են տվյալ ընտրական տեղամասի միասնական ցուցակին եւ ընդգրկված են այլ ընտրական տեղամասի հատուկ ցուցակի մեջ. Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը նման ընտրողներին պետք է գտնի տվյալ ընտրական տեղամասի



ընտրողների ընդհանուր ցուցակում եւ նրանց ազգանվան դիմաց «Փաստացի վիճակը» սյունակում կատարի գրանցում («Նախնական կալանքում է», «Զինվորական ծառայությունում է» կամ «Հիվանդանոցում է»), ինչն վավերացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի եւ քարտուղարի ստորագրություններով:

Հատուկ ցուցակում գրանցված ընտրողը մասնակցում է.

- ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին, եթե նա ապրելավայրը փոխում է միեւնույն տեղական մեծամասնական ընտրական մարզի տարածքում,
- համամասնական ընտրակարգի հիման վրա անցկացվող ընտրություններին, եթե նա քվեարկում է միեւնույն ընտրական մարզի տարածքում, որտեղ գրանցված է:

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՎԵԼՎԱԾԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը ընտրողների ցուցակի հավելվածը (տեղափոխվող քվեատուփի ցուցակը) կազմում է միասնական եւ հատուկ ցուցակներից ելնելով, այն դեպքում, եթե.

- ընտրողը, առողջության վիճակից ելնելով, չի կարող ներկայանալ ընտրությունների շինություն,
- ընտրողը, սահմանափակ հնարավորություններից ելնելով, չի կարող ներկայանալ ընտրությունների շինություն (միայն այն ընտրողը, ով անկախ չի կարող ներկայանալ ընտրությունների շինություն),
- ընտրողը գտնվում է նախնական կալանքում,
- ընտրողը պառկած է հիվանդանոցում կամ այլ ստացիոնար բուժիչ հիմնարկությունում եւ այնտեղ չի բացվում ընտրական տեղամաս,
- ընտրողը զինծառայող է, ծառայում է սահմանի վրա գտնվող ռազմական զորամասում, որն ընտրական տեղամասից հեռու է տեղակայված եւ այնտեղ ընտրական տեղամաս չի բացվում,
- գտնվում է ընտրական տեղամասի տարածքում, սակայն դժվարիասանելի վայրում:

Ընտրողը, որն ընտրությունների օրը չի կարող ներկայանալ ընտրությունների շինություն, տեղափոխվող քվեատուփի միջոցով քվեարկելու խնդրանքով տեղամասային ընտրական հանձնաժողովին պետք է դիմի մինչեւ ընտրությունները 2 օր շուտ. Հանձնաժողովի քարտուղարը ընտրական հանձնաժողովի գրանցման մատյանում պետք է գրանցի ընտրողի գրավոր կամ հեռախոսային դիմումը, նաեւ պետք է նշի ծանուցման ստույգ ժամանակը, հեռախոսի համարը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը ընտրողների ցուցակի հավելվածում ավտոմատորեն գրանցում է հատուկ ցուցակում ընդգրկված այն ընտրողներին, որոնք գտնվում են զինծառայության մեջ կամ նախնական կալանքում: Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը մարզային ընտրական հանձնաժողովից մինչեւ ընտրությունները, առնվազն 2 օր շուտ ստացված տվյալների հիման վրա ընտրողների ցուցակի հավելվածում ավտոմատորեն ներառնում է ընտրությունների օրը ստացիոնար բուժիչ հիմնարկներում գտնվող ընտրողներին:

Ընտրողների ցուցակի հավելվածում գրանցված ընտրողների տվյալները միասնական կամ հատուկ ցուցակներում չեն ջնջվում:

Ընտրողների ցուցակի հավելվածում գրանցվում են ընտրողների նույն տվյալները, որոնք կան միասնական ցուցակում եւ լրացուցիչ նշվում է դրա հերթական համարը միասնական կամ հատուկ ցուցակներում:

Ընտրողին հավելվածում տեղափոխելու դեպքում, հանձնաժողովի քարտուղարը ընտրողների միասնական եւ հատուկ ցուցակների «Փաստացի վիճակը» սյունակում կատարում է գրանցում: «Գրանցված է հավելվածում» եւ նշում է հավելվածում ընտրողի գրանցման պատճառը, ինչը հաստատվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի եւ քարտուղարի ստորագրություններով:

### ԳԼՈՒԽ III. ԸՆՏՐՈՂԻ ՔԱՐՏԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ընտրական տեսամասի տարածքում գրանցված եւ ընտրողների միասնական ցուցակում առնված բոլոր ընտրողներին մինչեւ ընտրությունները առնվազն 2 օր շուտ հանձնել ընտրողի քարտ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը մարզային ընտրական հանձնաժողովից ստանում է ընտրողների քարտերը, որտեղ պետք է նշված լինեն.

- Քվեարկության ամսաթիվն ու ժամանակը,
  - Ընտրական մարզի համարը եւ անվանումը, ընտրական տեղամասի համարը,
  - Քվեարկության շինության հասցեն, հարկը եւ սենյակի համարները,
  - Ընտրողի անուն- ազգանունը, ծննդյան ամսաթիվը եւ հասցեն,
  - Ընտրողի համարը ընտրողների միասնական ցուցակում (համընկնում է քարտի համարի հետ),
  - Ընտրողի կողմից սահմանափակ հնարավորության կամ առողջական վիճակի պատճառով ընտրություններին տեղափոխվող քվեատուփի միջոցով մասնակցության մասին դիմումի կամ դիմումի կատարման կարգի, տեղամասային ընտրական հանձնաժողովի հեռախոսի (ֆաքսի) համարները եւ այլ տվյալներ.
- ✓ Ընտրողի քարտի չընդունումը չի հանդիսանում քվեարկությանը մասնակցելու իրավունքի սահմանափակման պատճառ.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը եւ հանձնաժողովի քարտուղարը կազմում են ընտրողի քարտերի բաժանման ծրագիր եւ հանձնաժողովի անդամներին տեղեկացնում են քարտերի բաժանման ծրագրի մասին.

Ընտրողների այն քարտերը, որոնք չբաժանվեցին ըստ ընտրողների հասցեների, հանձնաժողովի անդամները պետք է վերադարձնեն հանձնաժողովի քարտուղարին, որը հանձնաժողովի գրանցման մատյանում գրանցում է վերադարձված ընտրողների քարտերի քանակությունը.

### ԳԼՈՒԽ IV. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Քվեարկության ընթացակարգերի անցկացման համար տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պարտավոր են օրենքով նախատեսված կարգի պաշտպանությամբ, մինչեւ քվեարկության օրը, կարգավորել քվեարկության շինությունը (տես քվեարկության շինության կարգավորման դիագրաման 22-րդ էջում).

- Քվեարկության շինության աչքի ընկնող տեղում պետք է փակցված լինեն.
  - ✓ Տեղեկատվություն հանձնաժողովի կազմի մասին,
  - ✓ Տեղեկատվություն հանձնաժողովի գտնվելու վայրի եւ աշխատանքային ժամերի մասին,
  - ✓ Ստույգ հասցեն եւ կապի հեռախոս/ֆաքսի համարները (եթե կան),
  - ✓ Ընտրական վարչության այն իրավական ակտերը, որոնք վերաբերում են այդ հանձնաժողովի գործունեությանը,
  - ✓ Հանձնաժողովի եւ հանձնաժողովի նախագահի կարգադրությունները,
  - ✓ Ընտրողների ցուցակները, ընտրողների ցուցակներում փոփոխություններ կատարելու եւ անճշտության բողոքարկման կարգը եւ ժամկետները,
  - ✓ Ընտրություններին մասնակից ընտրական սուբյեկտների ցուցակը (կուսակցական ցուցակները, թեկնածուների ցուցակները),
  - ✓ Քվեարկության կարգը կամ քվեաթերթիկների լրացման հրահանգը,

- ✓ Հայտարարություն, եթե քվեաթերթիկում գրանցված որեւէ ընտրական սուբյեկտ չի մասնակցում ընտրություններին,
  - ✓ Քաղվածք օրենքից, թե որ դեպքերում է քվեաթերթիկը համարվում անվավեր,
  - ✓ Քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունները (մեկ մեծամասնական եւ մեկ համամասնական համակարգերով ընտրությունների արդյունքների համար)։
- Ընտրական տեղամասում գրանցված յուրաքանչյուր 500 ընտրողի համար նախատեսված պետք է լինի գրանցման մեկ սեղան։
  - Ընտրական տեղամասում յուրաքանչյուր 500 ընտրողի համար պետք է պատրաստված լինի քաղտնի քվեարկության մեկ խցիկ։ Պարտադիր է, որ քաղտնի քվեարկության խցիկը ապահովված լինի գրեմական պիտույքով (գրչով), նաեւ դրանում պետք է փակցված լինի քվեարկության կարգը կամ քվեաթերթիկի լրացման հրահանգը։
  - Պետք է առանձնացվի սեղան հատուկ ծրարների տեղավորման համար (այն գտնվելու է քվեատուփին մոտ)։
  - Թափանցիկ քվեատուփը պետք է դրվի աչքի ըկնող տեղում այնպես, որ ընտրողը առանց հապաղման մոտենա եւ հատուկ ծրարը զցելուց հետո, անմիջապես հեռանա ընտրական տեղամասից։

Այն դեպքերում, երբ ընտրական տեղամասում կան հաշմանդամի սայլակով բերվող սահմանափակ հնարավորություններով ընտրողներ, տեղամասային ընտրական հանձնաժողովը (ընտրողի խնդրանքի հիման վրա) մինչեւ քվեարկությունը, առնվազն 20 օր շուտ, խնդրանքով պետք է դիմի պետական իշխանությանը եւ տեղական ինքնակառավարման եւ կառավարման մարմիններին, որոնք պարտավոր են ապահովել քվեարկության վայրի ժամանակավոր, պարզունակ հարմարեցումը։

**Հիշեցեք**, որ քվեարկության օրվա նախորդ օրվա մինչեւ ժամը 24-ը, հանձնաժողովի շինությունում պետք է հանվեն ընտրական սուբյեկտների քարոզչական նյութերը։

## **ԳԼՈՒԽ V. ՄԱՐԶԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՍՏԱՑՈՒՄԸ**

Տեղամասային ընտրական հանձնաժողովը, քվեարկության նախապատրաստվելու եւ քվեարկությունն անցկացնելու համար մարզային ընտրական հանձնաժողովից ստանում է ընտրական փաստաթղթեր եւ գույք։

- Վրաստանի ընտրական օրենսգիրքը
- Ընտրական վարչության աշխատակարգը
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների վկայականները
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցման մատյանը (համարակալված, քուղակապված եւ կնքված վիճակում)
- Ընտրողների ցուցակները (բողոքները ներկայացնելու կարգի հրահանգները)
- Ընտրողների քարտերը
- Ընտրություններին մասնակից ընտրական սուբյեկտների ցուցակը (կուսակցական ցուցակները, թեկնածուների ցուցակները)
- Հայտարարություն, եթե քվեաթերթիկում գրանցված որեւէ ընտրական սուբյեկտ չի մասնակցում ընտրություններին
- Քվեաթերթիկի լրացման հրահանգը
- Քաղվածք օրենքից, թե որ դեպքերում է քվեաթերթիկը համարվում անվավեր
- Ընտրական տեղամասի ցուցանակը

Տարբեր նյութեր.

- |   |   |
|---|---|
| <input type="checkbox"/> Գրիչներ                    | <input type="checkbox"/> Սկրատ          |
| <input type="checkbox"/> Մատիտներ                   | <input type="checkbox"/> Ամրակների տուփ |
| <input type="checkbox"/> Գրելու թուղթ               | <input type="checkbox"/> Սոսինձ (չոր)   |
| <input type="checkbox"/> Սոսնձելու փոքրիկ թերթիկներ | <input type="checkbox"/> Քանոն          |
| <input type="checkbox"/> Ստեպլեր                    | <input type="checkbox"/> Կալկուլյատոր   |
| <input type="checkbox"/> Ստեպլերի ասեղներ           | <input type="checkbox"/> Մոմ            |
| <input type="checkbox"/> Սոսնձող ժապավեն (սկոտչ)    | <input type="checkbox"/> Լամպ           |
|   | <input type="checkbox"/> Մարտկոցներ     |

Մարզային ընտրական հանձնաժողովը, մինչև քվեարկությունը առնվազն 12 ժամ շուտ, քվեաթերթիկներն ու հատուկ ծրարները փոխանցում է տեղամասային ընտրական հանձնաժողովին. քվեաթերթիկները պետք է փաթեթավորված լինեն 50-50 ական բլոկնոտի տեսքով եւ հերթականությամբ համարակալված.

Մինչև քվեարկությունը առնվազն 12 ժամ շուտ մարզային ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովին պետք է հանձնի.

- Քվեաթերթիկների բլոկնոտները
- Հատուկ ծրարները
- Քվեարկությունների օրվա գրանցումների գիրքը (համարակալված, քուղակապված եւ կնքված վիճակում)
- Մարկավորման հեղուկը (մեկ շիշ` յուրաքանչյուր 500 ընտրողի հաշվով) եւ մարկավորումը ստուգող ուլտրամանուշակագույն լապտերիկը (8 մարտկոցով)
- Վերստուգիչ թերթիկները (երեք` երկուսը հիմնական եւ տեղափոխվող քվեատուփերում դնելու, երրորդը` համեմատելու համար)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը (կնքված)
- Գրանցողների կնիքները (կնքված)
- Կնքման բարձիկը
- Մեկ հիմնական եւ մեկ տեղափոխվող թափանցիկ քվեատուփ
- Պատճենահանման սարք
- Քվեարկության խցիկներ
- Անհատական համար ունեցող քուղեր (քվեատուփերի կնքման համար)
- Քվեարկության արդյունքների հանրագումարային բլոկնոտներ (մեկ մեծամասնական եւ մեկ համամասնական համակարգով ընտրությունների արդյունքների համար)
- Ցուցադրական արձանագրություն(ներ) (մեկ մեծամասնական եւ մեկ համամասնական համակարգերով ընտրությունների արդյունքների համար)
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության հաստատման որոշման ձեւը. սովորական չափի ծրարներ` հետագայում փաստաթղթերի փաթեթավորման (երկուական մեծամասնական եւ համամասնական ընտրությունների փաստաթղթերի փաթեթավորման համար)
- Փչացած քվեաթերթիկների համար
- Չօգտագործված քվեաթերթիկների համար
- Անվավեր ճանաչված քվեաթերթիկների համար
- Անվավեր ճանաչված, այլ ընտրական տեղամասերի համար նախատեսված քվեաթերթիկների համար

- Բոլոր դեմ տրված քվեաթերթիկների համար
- Սովորական չափի ծրարներ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի եւ գրանցողների կնիքների փաթեթավորման համար
- Մեծ չափի ծրարներ՝ յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի կողմից ստացված քվեաթերթիկների համար
- Մեծ չափի ծրարներ՝ ընտրողների ցուցակների փաթեթավորման համար
- Պարկ (կամ տուփ) ընտրական փաստաթղթերի տեղավորման եւ այդ փաստաթղթերը ընտրական մարզ ներկայացնելու համար
- Պարկին/տուփին սոսնձվող գլխավոր թերթիկ.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ նախագահի կարգադրության հիման վրա, նախագահի տեղակալը, հանդիսանում է մարզային ընտրական հանձնաժողովից ստացվող ընտրական փաստաթղթերի ընդունման պատասխանատու անձը.

Եթե պարզվի, որ ընտրական տեղամասի համար տրված ընտրական քվեաթերթիկների բլոկնոտների եւ հատուկ ծրարների քանակությունը սահմանվածից ավելի է կամ պակաս, նաեւ եթե ստացված ընտրական փաստաթղթերում պակասում է որեւէ մեկը, տեղամասային ընտրական հանձնաժողովը պետք է կազմի արձանագրություն եւ անհապաղ դիմի մարզային ընտրական հանձնաժողովին.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը ստացված փաստաթղթերի տեսակները եւ քանակությունը պետք է գրանցի հանձնաժողովի գրանցման մատյանում. Նաեւ պետք է նշի ընտրական փաստաթղթերի/գույքի ստացման անսաթիվը.

## **ԸՆԴՈՒՆՄԱՆ-ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ընտրական փաստաթղթերի ընդունման-հանձնման արձանագրությունը իրենից ներկայացնում է ընտրական փաստաթղթերի ստույգ քանակության հաշվառման փաստաթուղթ.

Մարզային ընտրական հանձնաժողովը մինչեւ քվեարկությունը, առնվազն 12 ժամ շուտ, տեղամասային ընտրական հանձնաժողովին է հանձնում ընտրական քվեաթերթիկներն եւ հատուկ ծրարները. Քվեաթերթիկների եւ հատուկ ծրարների հանձնման արձանագրությունը կազմվում է երկու հատ.

Ընտրական փաստաթղթերի ընդունման-հանձնման արձանագրության ձեւավորումից առաջ, պարտադիր է ստուգել փոխանցված քվեաթերթիկների բլոկնոտների եւ հատուկ ծրարների փաթեթների քանակությունը. Ընդունման-հանձնման արձանագրությունը, ճշտված տվյալների ներառումից հետո, ստորագրում են ընտրական փաստաթղթերի հանձնող եւ ընդունող անձինք. Արձանագրության մի հատը մնում է ընտրական փաստաթղթերը հանձնող ընտրական հանձնաժողովում (մարզային ընտրական հանձնաժողովում), իսկ երկրորդը՝ ընտրական փաստաթղթերը ընդունող ընտրական հանձնաժողովում (տեղամասային ընտրական հանձնաժողովում). Ընտրական փաստաթղթերը ընդունող անձը պարտավոր է պահանջել ընդունման-հանձնման արձանագրության մի հատը, որը հանձնելու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին.

Հիշեցեք.

Ընդունման-հանձնման արձանագրության երկակի ձեւակերպումը պարտադիր է. Արձանագրության մի հատը պետք է մնա ընտրական փաստաթղթերը հանձնող մարզային ընտրական հանձնաժողովում, իսկ երկրորդը՝ ընտրական փաստաթղթերը ընդունած տեղամասային ընտրական հանձնաժողովում.

Ընդունման-հանձնման արձանագրությունը ընդհանուր տեղեկատվություն է. Ցանկացած շահագրգռված անձ իրավունք ունի ծանոթանալ ընդունման-հանձնման արտանագրությունում առկա տեղեկատվության հետ.

## ԳԼՈՒԽ VI. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեն.

- Կենտրոնական, մարզային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները
- Կենտրոնական եւ մարզային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչները (աշխատակազմի աշխատակիցները)
- Ընտրական սուբյեկտի (միայն մեկ) ներկայացուցիչը
- Տեղական եւ միջազգային կազմակերպությունների երկու հավատարմագրված դիտորդներ (կարող է ուղեկցել թարգմանիչը)
- Մամուլի եւ զանգվածային լրատվության այլ միջոցների առավելագույնը երեք ներկայացուցիչ

Քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր անձ պետք է ունենա իր ով լինելը եւ կարգավիճակը նշող ԿԸՅ-ի կամ մարզային ընտրական հանձնաժողովի կողմից տրված կրօքանշանը (վկայականը)։

### Դիտորդի իրավունքները.

Դիտորդը իրավունք ունի.

- Ներկա գտնվել եւ հետեւել հանձնաժողովի նիստերին.
- Քվեարկության օրը ցանկացած ժամանակ գտնվել քվեարկության շինությունում, անարգել տեղաշարժվել ընտրական տեղամասում եւ հետեւել քվեարկության գործընթացի բոլոր փուլերին.
- Քվեարկության օրը ցանկացած ժամանակ փոխարինել իր կողմից ներկայացված կազմակերպության գրանցված այլ ներկայացուցչին (նմանի առկայության դեպքում).
- Մասնակցել քվեատուփի ստուգմանը՝ դրա կնքումից եւ դրա բացումից հետո.
- Հետեւել ընտրողների ցուցակում ընտրողների գրանցմանը, քվեաթերթիկների հանձնմանը եւ դրանց ստուգմանը, չխոչընդոտելով քվեարկության ընթացակարգին.
- Հետեւել տեղափոխվող քվեատուփի միջոցով քվեարկության ընթացքին.
- Ներկա գտնվել եւ հետեւել ձայների հաշվարկմանը այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են քվեաթերթիկների տեսնելը.
- Ներկա գտնվել եւ հետեւել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության եւ մյուս փաստաթղթերի ձեւակերպմանը.
- Դիմումով (բողոքով) դիմել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին՝ քվեարկության եւ ընտրությունների ընթացակարգի հետ կապված հարցերով, որոնցով կոնկրետ խախտումների հաստատման դեպքում, պահանջում է արձագանքում.
- Ընտրողից պահանջել ցույց տալ թե որքան քվեաթերթիկ եւ հատուկ ծրար ունի նա իր ձեռքին.
- Բողոքարկի տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները վերադաս ընտրական հանձնաժողովի առաջ կամ դատարանում
- Հետեւել քվեատուփին, քվեատուփի մեջ հատուկ ծրարների զցելուն, քվեատուփերի բացմանը, քվեաթերթիկների հաշվարկմանը եւ արձանագրության կազմմանը.
- Ծանոթանալ ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության եւ ընտրությունների արդյունքների հանրագումարային արձանագրության հետ.

Հիշեցեք. Դիտորդը իրավունք ունի անարգել տեղաշարժվել տեղամասի տարածքում եւ ազատ (առանց խոչընդոտման) հետեւել քվեարկության գործընթացին ցանկացած տեղից.

## Դիտորդը իրավունք չունի.

- ✘ Միջամտել ընտրական հանձնաժողովի գործառույթների եւ գործունեության մեջ
- ✘ Ազդեցություն գործել ընտրողի կամքի ազատ արտահայտության վրա
- ✘ Սուտք գործել գաղտնի քվեարկության խցիկ
- ✘ Քարոզել ընտրողին ընտրական որեւէ սուբյեկտի օգտին կամ դեմ
- ✘ Կրել ընտրական որեւէ սուբյեկտի խորհրդանիշը կամ նշանը
- ✘ Քվեարկության օրը քվեարկության շինությունում գտնվել առանց կրծքանշանի
- ✘ Խախտել Վրաստանի ընտրական օրենսգրքի մյուս պահանջները.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը իրավունք ունի լիազորությունների գերազանցման դեպքում, դիտորդին ցուցում տա դադարեցնել վերոնշյալ գործունեությունը, հակառակ դեպքում, հանձնաժողովի նախագահը կարող է քվեարկության սենյակ հրավիրել իրավապահ մարմինների ներկայացուցչին եւ կարգուկանոնը խախտող դիտորդին դուրս հրավիրել քվեարկության շինությունից.

## Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը

Ընտրական սուբյեկտին տեղամասային ընտրական հանձնաժողովի հետ հարաբերություններում ներկայացնում է ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը.

Ընտրական սուբյեկտի միայն մեկ ներկայացուցիչ իրավունք ունի ներկա գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերին, քվեարկության օրը գտնվել քվեարկության շինությունում եւ ներկա գտնվել քվեարկության, ձայների հաշվարկման եւ քվեարկության արդյունքների հանրագումարման բոլոր գործընթացներին.

Ընտրական սուբյեկտը իրավունք ունի ցանկացած ժամանակ ետ կանչել կամ փոխել իր ներկայացուցչին, որի մասին տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովին.

## Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչները.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերին ներկա գտնվելու եւ քվեարկության օրը քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեն Կենտրոնական եւ մարզային ընտրական հանձնաժողովներում հավատարմագրված մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչները. Քվեարկության օրը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների միեւնույն կազմակերպությունը իրավունք ունի ընտրական տեղամասում միաժամանակ ունենալ առավելագույնը 3 ներկայացուցիչ.

Հիշեցեք.

Ընտրական սուբյեկտի, մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչները նաեւ օգտվում են նույն իրավունքներից, որոնք սահմանված են սույն ձեռնարկի «Դիտորդի իրավունքներով» եւ Վրաստանի ընտրական օրենսգրքի 70 հոդվածով.

# ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

## ԳԼՈՒԽ VII. ՄԻՆՉԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանձնաժողովի անդամները քվեարկության օրը ընտրական տեղամասում պետք է հայտնվեն ժամը 07.00-ին, բացեն ընտրական տեղամասը եւ պատրաստվեն քվեարկության անցկացմանը.

Եթե քվեարկության օրը պարզվի, որ հանձնաժողովի անդամների թիվը հինգից պակաս է, ապա ընտրական տեղամասը չի բացվում.

Քվեարկությունը անց է կացնում տեղամասային ընտրական հանձնաժողովը, նրա վրա էլ դրվում է ընտրողների կողմից ընտրական իրավունքների իրականացման ապահովման ողջ պատասխանատվությունը.

Քվեարկությունը անց է կացվում քվեարկության շինությունում ժամը 08-ից մինչեւ ժամը 20-ը.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք է ունենա հանձնաժողովի անդամի կրծքանշան (վկայական). Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը դիտորդներից, ընտրական սուբյեկտների եւ մանուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչներից պահանջում է ամրացնել հավատարմագրության կրծքանշանները (վկայականները).

Հանձնաժողովի նախագահը ընտրական տեղամասի բացումից անմիջապես հետո, գրանցման գիրքը հանձնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին, որն առաջին եւ երկրորդ էջերում գրանցում է քվեարկության շինությունում գտնվող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անուն-ազգանունները՝ նրանց նշանակած սուբյեկտի նշումով, նաեւ քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց անուն-ազգանունները, որ կազմակերպությունները կամ ընտրական սուբյեկտին են ներկայացնում եւ դա հաստատվում է ստորագրությամբ.

Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի քարտուղարին նաեւ հանձնում է քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունների բլոկնոտները եւ ցուցադրական արձանագրությունները. Հանձնաժողովի քարտուղարը լրացնում է քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության բլոկնոտի կազմի վերջին թերթիկը. Ցուցադրական արձանագրությունները պետք է փակցվեն աչքի ընկնող տեղում (հանձնաժողովի քարտուղարի սեղանի մոտակայքում).

Հանձնաժողովի քարտուղարը նաեւ լրացնում է գրանցման մատյանը.

### Վիճակահանություն

Քվեարկության առանձին ընթացակարգերի համապատասխան անցկացման նպատակով մինչեւ քվեարկության սկսելը, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջեւ վիճակահանությամբ բաժանվում են հետեւյալ գործառույթները.

1. Ընտրողների գրանցող (մեկ անդամ յուրաքանչյուր 500 ընտրողի հաշվով)
2. Քվեատուփի եւ հատուկ ծրարների վերահսկիչ
3. Տեղափոխվող քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի մեկ անդամ
4. Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամ

Վիճակահանությանը չեն մասնակցում հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը եւ քարտուղարը. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը մինչեւ վիճակահանության անցկացումը, պետք է հստակեցնի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը եւ բաժանման ենթակա գործառույթների քանակությունը.

Այն դեպքում, եթե քվեարկության օրը հանձնաժողովի անդամների թիվը

1. մեկով պակաս է, քան բաժանվելիք գործառույթները, ապա հանձնաժողովի քարտուղարը կատարում է ընտրողին գրանցող հանձնաժողովի անդամի գործառույթը,
2. երկուսով պակաս է, ապա հանձնաժողովի նախագահի տեղակալը կատարում է ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթը,



3. երեքով պակաս է, ապա հանձնաժողովի նախագահը կատարում է քվեատուփը եւ ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամի գործառույթը,
4. չորսով պակաս է, ապա նվազեցվում է ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամների թիվը.

Այն դեպքում, երբ հանձնաժողովի քարտուղարին տրվում է ընտրողի գրանցողի գործառույթ, ապա գրանցման գիրքը փոխանցվում է հանձնաժողովի նախագահին.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ անց է կացնում վիճակահանություն հանձնաժողովի անդամների միջև՝ գործառույթների բաժանման նպատակով.

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.**

- Ստուգում է այն ծրարի ամբողջությունը, որտեղ տեղավորված է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը եւ բացում է այն,
- Միատեսակ ձեւի եւ տեսքի (գույնի) թերթիկների վրա միեւնույն եւ նույն գույնի գրիչով գրում է հանձնաժողովի անդամների գործառույթները,
- Թերթիկները հաստատում է հանձնաժողովի կնիքով եւ ծալում է այնպես, որ դրանց վրա տեքստի կարդալի հնարավոր չլինի,
- Եթե վիճակահանությանը մասնակից հանձնաժողովի անդամների թիվը բաժանվելիք գործառույթների քանակությունից ավելի է, ապա գործառույթների համապատասխան քանակության թերթիկների հետ միասին պատրաստում է կնքված, դատարկ թերթիկներ, այնպես, որ թերթիկների ընդհանուր քանակությունը հավասարվի վիճակահանությանը մասնակից հանձնաժողովի անդամների թվին,
- Թերթիկները տեղավորում է տեղափոխվող քվեատուփի մեջ, որտեղից էլ դրանք հատ առ հատ հանում են հանձնաժողովի անդամները,

Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքում բաժանված գործառույթները պետք է գրանցի գրանցման գրքի 3-րդ էջում.

Հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, վիճակահանության արդյունքով հանձնաժողովի անդամի սահմանված գործառույթը ժամանակավորապես կարող է կատարել հանձնաժողովի այլ անդամը, ինչը հանձնաժողովի քարտուղարը ժամանակի նշումով գրանցում է գրանցման գրքի 5-րդ էջում.

Եթե հանձնաժողովի որեւէ անդամ հանձնաժողովում հայտնվեց վիճակահանության անցկացումից հետո, ապա նրա համար գործառույթի տրման հարցը լուծում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

Հանձնաժողովի անդամը, որն քվեարկության օրը չի հայտնվի տեղամասային ընտրական հանձնաժողովում, կարող է փոխարինվել այդ անդամին ներկայացրած ընտրական սուբյեկտի կողմից ներկայացված հանձնաժողովի պահեստային անդամով. Հանձնաժողովի քարտուղարը գրանցման գրքի առաջին (կամ երկրորդ) էջում նշում է հանձնաժողովի պահեստային անդամի անուն-ազգանունը, նրան նշանակող սուբյեկտը եւ հանձնաժողովի անդամը այն ստորագրում է. Պահեստային անդամի համար գործառույթի տրման հարցը լուծում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.

- Նույնիսկ այն դեպքում, երբ պահեստային անդամը ընտրական տեղամասում հայտնվեց վիճակահանության ժամանակ, նա վիճակահանությանը չի մասնակցում,
- Այն դեպքում, եթե պահեստային անդամը փոխարինելում է հիմնական անդամին, նրա փոխարինումը հիմնական անդամով չի իրականացվում.

**Ընտրողների թվաքանակի հրապարակումը**

Հանձնաժողովի նախագահը հայտարարում է ընտրողների թվաքանակը ընտրողների միասնական, հատուկ ցուցակներում եւ ընտրողների ցուցակի հավելվածում. Ընտրողների թվաքանակը ընտրողների միասնական ցուցակում տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը անհապաղ գրանցում է քվեարկության օրվա գրանցման գրքում, ցուցադրական արձանագրությունների եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունների

առաջին սյունակում (ընտրողների թվաքանակը ընտրողների հատուկ ցուցակում գրանցվում է քվեարկության ավարտից հետո)։

### **Ստացված քվեաթերթիկների եւ հատուկ ծրարների քանակության հրապարակումը**

Հանձնաժողովի նախագահը ստուգում է քվեաթերթիկների ու հատուկ ծրարների ամբողջությունը. Ընդունման-հանձնման արձանագրության հիման վրա, ստուգում է հրապարակում է ստացված քվեաթերթիկների եւ հատուկ ծրարների քանակությունը. Ստացված քվեաթերթիկների քանակությունը տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը անհապաղ գրանցում է քվեարկության օրվա գրանցումների գրքում, ցուցադրական արձանագրության եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության 5-րդ սյունակում։

### **Քվեարկության գործընթացի համար անհրաժեշտ նյութերի հանձնումը հանձնաժողովի անդամներին.**

- Հանձնաժողովի նախագահը ընտրողների գրանցողներին հանձնում է.
  - ✓ Այբբենական կարգով բաժանված ընտրողների միասնական ցուցակը (մոտ 500 ընտրողի ցուցակը),
    - նախագահը գրանցման ամեն մի սեղանի մոտ պետք է փակցնի ընտրողների ազգանունների այբբենական հերթականությունը (սեղանին դրված ցուցակին համապատասխան),
    - յուրաքանչյուր գրանցողին հանձնված միասնական ցուցակի այբբենական հերթականությունը հանձնաժողովի քարտուղարը գրանցում է գրանցման գրքի 3-րդ էջում գրանցողի անվան-ազգանվան դիմաց.
  - ✓ Ընտրողների հատուկ ցուցակը (հանձնում է գրանցողներից մեկին),
  - ✓ Սեծամասնական եւ համամասնական քվեաթերթիկների մեկական բլոկնոտ, նախագահը եւ ընդունող գրանցողները բլոկնոտների կազմին ստորագրությամբ հաստատում են քվեաթերթիկների ընդունում-հանձնումը,
  - ✓ Գրանցողի կնիքը (նախագահը ստուգում է այն ծրարի ամբողջությունը, որտեղ գտնվում է գրանցողների կնիքները, գրանցողների կնիքները դնում է տեղափոխվող քվեատուփի մեջ, գրանցողների տուփից վերցնում են մեկական կնիք, որոնց կողը հանձնաժողովի քարտուղարը գրանցում է գրանցման գրքի 3-րդ էջում գրանցողի անվան-ազգանվան դիմաց,
  - ✓ Սարկիրացման հեղուկը
- Հանձնաժողովի նախագահը ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին հանձնում է մարկիրացման ստուգման ուլտրամանուշակագույն լամպտերիկը.
- Հանձնաժողովի նախագահը քվեատուփի եւ հատուկ ծրարների վերահսկիչ հանձնաժողովի անդամին հանձնում է հատուկ ծրարներն ու հիմնական քվեատուփը.

### **Քվեատուփի կնքումը**

Առաջին ընտրողի գալուց անմիջապես հետո (սակայն ժամը 08.00-ից ոչ շուտ) տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրական փաստաթղթերից վերցնում է երեք վերահսկիչ թերթիկներ եւ լրացման համար հանձնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին. Վերահսկիչ թերթիկները օգտագործվում են քվեատուփի կնքման եւ քվեարկության մեկնարկի ստուգման համար.

Մինչեւ վերահսկիչ թերթիկների լրացումը, առաջին ընտրողը պետք է անցնի գրանցում ընտրողների ցուցակում. Վերահսկիչ թերթիկը լրացվում է միայն նրանից հետո, երբ հաստատվում է, որ առաջին ընտրողի գրանցման վայրը պատկանում է տվյալ ընտրական տեղամասի սահմաններին. Յուրաքանչյուր վերահսկիչ թերթիկի վրա գրվում է.

- ✓ Առաջին ընտրողի անուն-ազգանունը,
- ✓ Առաջին ընտրողի գրանցման վայրը,

- ✓ Առաջին ընտրողի անձնական վկայականի եւ անձնական համարը (կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի համարը),
- ✓ Առաջին ընտրողի եւ տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր ներկա անդամների ստորագրությունը,
- ✓ Վերահսկիչ թերթիկների քվեատուփերում դնելու ստույգ ժամանակը.


Վերահսկիչ թերթիկները ստորագրում են առաջին ընտրողը եւ տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր ներկա անդամները. Հանձնաժողովի քարտուղարը գրանցման գրքի 4-րդ էջում գրանցում է վերահսկիչ թերթիկում գրանցված տվյալները.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ստուգում եւ կնքում է հիմնական եւ տեղափոխվող քվեատուփերը անհատական համար ունեցող քուղով, որի համարը ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցում է քվեարկության օրվա գրանցման գրքի 4-րդ էջում.

**Չիշեցեք.**

Քվեատուփերը այնպես պետք է կնքվեն (քվեաթերթիկները զցելու բացվածքից բացի), որ առանց դրանց ամբողջությունը խախտելու հնարավոր չլինի զցել կամ հանել ինչ-որ բան.

Քվեատուփի կնքումից անմիջապես հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հիմնական եւ տեղափոխվող քվեատուփերում տեղավորում է վերահսկիչ թերթիկները. Վերահսկիչ թերթիկներից մեկը պահում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քվեատուփի բացումից հետո, դրանում գտնվող վերահսկիչ թերթիկի հետ համեմատելու համար.



**Չիշեցեք.**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պահում եւ պատասխանատվություն է կրում համեմատելու համար պահված վերահսկիչ թերթիկի պահպանության եւ ստույգության համար.

## ՉԼՈՒԽ VIII. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1

Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը պարտավոր է.

- Կարգավորել ընտրական տեղամաս մուտք գործող ընտրողների հոսքը քվեարկության գործընթացը համապատասխանաբար անցկացնելու նպատակով,
- Պահանջել հերթում կանգնած ընտրողներից ներկայացնել անձն հաստատող փաստաթուղթ. Անձն, որը չի ունենա քվեարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, քվեարկության չեն թողնի,
- Ուլտրամանուշակագույն լապտերիկով ստուգել, բացահայտել ընտրողը մակիրացված է, թե ոչ. Ընտրողին միայն նրանից հետո թույլ տա մուտք գործել ընտրական տեղամաս, երբ կհանդգնի, որ ընտրողը մարկավորում չի անցել. Այն դեպքում, եթե սարքը ցույց տա, որ ընտրողը արդեն անցել է մարկավորում, նրան քվեարկության չեն թողնում. Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը հանձնաժողովի նախագահին պետք է տեղեկացնի նման ընտրողի ով լինելը, հանձնաժողովի քարտուղարը գրանցման գրքում (10-րդ կամ հաջորդ էջերում) գրանցում է սույն փաստը.
- Թույլ չտա ընտրողներին մուտք գործել քվեարկության սենյակ, եթե նրան վերաբերվող գրանցման սեղանի մոտ կանգնած են երկուսից ավելի ընտրողներ.
- Ընտրողին ցույց տալ, որ մոտենա գրանցման այն սեղանին, որին պատկանում է ընտրողի ազգանվան առաջին տառը՝ ընտրողների ցուցակից.

2

Ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամը պարտավոր է.

- Ընտրողից պահանջել Վրաստանի քաղաքացու անձնական վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,

Առանց անձն հաստատող փաստաթղթի ներկայացման քվեաթերթիկի հանձնումը արգելված է.

- Ներկայացված փաստաթղթի հիման վրա ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակում գտնել ընտրողին,
- Իրականացնել ընտրողի մարկավորումը (եթե ընտրողը հրաժարվում է մարկավորումից, ապա ընտրողը չի մասնակցի քվեարկությանը),
- Միասնական եւ հատուկ ցուցակների համապատասխան սյունակում, ընտրողի ազգանվան դիմաց գրանցել ընտրողի անձնական համարը,
- Ստորագրությամբ ստուգել քվեաթերթիկները (ետեւի կողմից, դրա համար հատկացված տեղում),
- Հատուկ կնիքով ստուգել քվեաթերթիկները (ետեւի կողմից, դրա համար հատկացված տեղում),
- Քվեաթերթիկների հանձնումը հաստատել ընտրողների ցուցակում ստորագրությամբ,
- Ընտրողի միասնական կամ հատուկ ցուցակում իր ազգանվան դիմաց ընտրողի ստորագրությամբ հաստատել քվեաթերթիկի հանձնումը,
- Ընտրողին հանձնել ստուգված մեծամասնական եւ համամասնական քվեաթերթիկները (Ք. Թբիլիսիի սակրեբուլոյի ընտրությունների համար տրվում է միայն մեկ քվեաթերթիկ),
- Ընտրողին տեղեկացնել, որ նա մտնի գաղտնի քվեարկության խցիկ.

Յուրաքանչյուր ընտրող ձայնը տալիս է անձամբ. Ուրիշի փոխարեն ձայն տալը արգելվում է. Հետեւաբար, հանձնաժողովի անդամը ընտրողին հանձնում է միայն մեկ մեծամասնական եւ մեկ համամասնական քվեաթերթիկ.

3

Ընտրողը մուտք է գործում գաղտնի քվեարկության խցիկ եւ լրացնում է քվեաթերթիկը.

Քվեաթերթիկը լրացնելուց հետո ընտրողը այն պետք է այնպես ծալի, որ չերեւա, թե ում օգտին է տրված ձայնը. Մեկից ավելի ընտրողի մուտքը գաղտնի քվեարկության խցիկ արգելված է.

Հանձնաժողովի անդամները եւ քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն մինչեւ ընտրողի գաղտնի քվեարկության խցիկ մուտք գործելը, նրանից պահանջել ցույց տալ, թե քանի քվեաթերթիկ ունի իր ձեռքում. Ընտրողը պարտավոր է կատարել այդ պահանջը.

4

Ընտրողը մոտենում է առանձին դրված սեղանին, որտեղ դրված են հատուկ ծրարները. Ընտրողը լրացված քվեաթերթիկը իր ձեռքով տեղավորում է հատուկ ծրարի մեջ եւ հատուկ ծրարը գցում է քվեատուփի մեջ.

Հիշեցեք. Երկու քվեաթերթիկները (համամասնական եւ մեծամասնական) դրվում են միեւնույն հատուկ ծրարի մեջ.

Հանձնաժողովի անդամները եւ քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն մինչեւ ընտրողի կողմից քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ տեղավորելը, նրանից պահանջել ցույց տալ, թե քանի քվեաթերթիկ ունի իր ձեռքում. Ընտրողը պարտավոր է կատարել այդ պահանջը.

Քվեաթերթիկների դուրս բերումը քվեարկության շինությունից արգելվում է.

Քվեատուփի եւ հատուկ ծրարների վերահսկիչ հանձնաժողովի անդամը պարտավոր է մշտապես վերահսկել քվեատուփը, թույլ չտալ, որ քվեատուփի մոտ լինի մեկից ավելի ընտրող. Նա պետք է փակված պահի ծրարները գցելու բացվածքը եւ այն բացելու է միայն նրանից հետո, երբ կհամոզվի, որ ընտրողի ձեռքին միայն մեկ ծրար կա. Քվեատուփի հատուկ ծրարը գցելուց հետո, ընտրողին ասվում է, որ նա հեռանա տեղամասից.


Քվեարկության ավարտից հետո, քվեատուփի վրա կնքվում է ծրարները գցելու բացվածքը.

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ**

Քվեարկության օրը ընտրողների ակտիվությունը սահմանելու համար հանձնաժողովի քարտուղարը ընտրողների գրանցողի (գրանցողների) հետ միասին, օրվա ընթացքում երկու անգամ (12:00, 17:00) հաշվում է ընտրողների ցուցակում ընտրողների ստորագրությունների քանակությունը.

Հանձնաժողովի քարտուղարը վավերացված տվյալները գրանցում է քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության, ցուցադրական արձանագրության եւ քվեարկության օրվա գրանցման գրքում. Հանձնաժողովի նախագահը ընտրությունների մասնակիցների մասին տեղեկատվությունը հաղորդում է մարզային ընտրական հանձնաժողովին.

# ՁԱՅՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ



## ՉԼՈՒԽ IX. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԲԱՑԱՌԻԿ ԴԵՊՔԵՐԸ

### 1) Ընտրողը գրանցված չէ ընտրողների ցուցակում

Եթե ընտրողը գրանցված չէ ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակում, սակայն ընտրողը ներկայացնում է տեղեկանք սահմանը հատելու մասին (գրանցում անձնագրի մեջ), տեղեկանք բուժիչ հիմնարկում բուժման վրաբերյալ կամ տեղեկանք կալանքից ազատվելու մասին, ապա ընտրողի գրանցողը ընտրողին գրանցելու է:

Գրանցողը պետք է պարզի, որ տեղեկանքը տրված է մինչև ընտրությունները առնվազն 22 օր շուտ, գրանցողը ընտրողի կողմից ներկայացրած տեղեկանքի եւ անձն հաստատող վկայականի (գրանցման վկայականի) հիման վրա ընտրողին գրանցում է հատուկ ցուցակում եւ ներկայացված փաստաթղթերի ֆոտոպատճենները հանձնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:

### 2) Քվեաթերթիկը լրացնելու համար ընտրողին օգնություն է պահանջվում.

Եթե ընտրողը չի կարող անկախ լրացնել քվեաթերթիկը, նա իրավունք ունի օգնություն խնդրել ցանկացած այլ, իր համար ցանկալի ընտրողից, բացառությամբ հանձնաժողովի անդամների, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի եւ դիտորդների. Ընտրողին, որն օգնում է լրացնել ուրիշի քվեաթերթիկը, արգելվում է հրապարակել նրա ընտրությունը:

### 3) Ընտրողի/հանձնաժողովի անդամի մոտ քվեաթերթիկը փչացավ.

Եթե ընտրողի կամ գրանցողի մոտ քվեաթերթիկը փչացավ, նրանք այդ մասին պետք է տեղեկացնեն հանձնաժողովի նախագահին. Հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ գրանցողը պարտավոր է նորով փոխել ընտրողի փչացած քվեաթերթիկը. Հանձնաժողովի նախագահը ընտրողի ներկայությամբ պետք է կտրի փչացած քվեաթերթիկի անկյունը, գրի «փչացած է» եւ ստորագրի. Հանձնաժողովի քարտուղարը փչացած քվեաթերթիկը պետք է պահի առանձին:

### 4) Քվեարկության դադարեցումը.

Այն դեպքում, երբ անհնարին է դառնում քվեարկության շարունակումը եւ ընտրողի կամ քվեարկության արտահայտումը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը միանձնյա ընդունում է որոշում քվեարկության շինության փակման եւ քվեարկության կանգնեցման մասին. Որոշման մեջ նշվում են շինության ժամանակավորապես փակման, քվեարկության կանգնեցման կամ դրա ընդհատման պատճառները եւ ժամանակը. Նախագահը պատասխանատվություն է կրում այդ որոշման համար:

Շինության ժամանակավոր փակման եւ քվեարկության ընդհատման համար տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ընդունել որոշում հանձնաժողովի նախագահի կարգադրության հաստատման կամ դրա անվավեր ճանաչման մասին:

Շինության փակման կամ քվեարկության ընդհատման պատճառների վերացումից անմիջապես հետո, հանձնաժողովի նախագահը ընդունում է որոշում քվեարկության վերսկսման եւ քվեարկության շինության բացման մասին. Եթե հիմնախնդրի կարգավորումը հնարավոր չէ, ապա հանձնաժողովի նախագահը ընդունում է որոշում քվեարկության ընդհատման եւ ընտրական տեղամասի փակման մասին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ընդունել որոշում հանձնաժողովի նախագահի կարգադրության հաստատման կամ դրա անվավեր ճանաչման մասին:

Հիշեցեք. եթե քվեարկությունը հայտարարվում է դադարեցված, ապա այն չի վերսկսվում.

Հանձնաժողովի քարտուղարը զանցման գրքում (10-րդ եւ հաջորդ էջերում) գրանցում է ընդհատման, վերսկսման եւ դադարեցման պատճառները եւ ժամանակը:

### 5) Քվեատուփի ամբողջության խախտումը.

Եթե խախտվում է քվեատուփի կնիքի ամբողջությունը, քվեարկության ընթացքը ընդհատվում է եւ հանձնաժողովի նախագահը ընդունում է որոշում:

- Քվեատուփի կրկնական կնքման եւ քվեարկության շարունակման մասին, կամ
- Քվեարկության գործընթացի դադարեցման մասին:

Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գրանցման գրքում (10-րդ եւ հաջորդ էջերում) գրանցում է տեղի ունեցածի բովանդակությունը եւ քվեատուփի կրկնական կնքման ժամանակը.

**6) Քվեարկությունը ավարտվեց ժամանակից շուտ.**

Քվարկության օրը զորամասերում, դժվարհասանելի վայրերում, հիվանդանոցներում եւ ստացիոնար այլ բուժիչ հիմնարկներում բացված ընտրական տեղամասերում տեղամասային ընտրական հանձնաժողովը կարող է քվեարկությունը ավարտված համարել մինչեւ ժամը 20-ը ցանկացած ժամանակ, եթե քվեարկությանը մասնակցել են ընտրողների ցուցակում գրանցված բոլոր ընտրողները.

**ՉԼՈՒԽ X. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ՔՎԵԱՏՈՒՓԻ ՄԻՋՈՑՈՎ**

Քվեարկության օրը ժամը 9.00-ից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ որոշված տեղափոխվող քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի 1 անդամին հանձնարարում է, ըստ ընտրողի գտնվելու վայրի, անցկացնել քվեարկություն եւ հանձնում է.

- Ընտրողների ցուցակի հավելվածը (տեղափոխվող քվեատուփի ցուցակը), ըստ որի նախօրոք հստակեցվում է տեղափոխվող քվեատուփի ուղերթը.
- Գրանցողի կողմից ստորագրությամբ եւ հատուկ կնիքով ստուգված քվեաթերթիկները՝ անհրաժեշտ քանակությամբ, նաեւ հատուկ ծրարները՝ անհրաժեշտ քանակությամբ (հանձնաժողովի քարտուղարը գրանցման գրքի 4-րդ էջում պետք է գրանցի թե քանի քվեաթերթիկ եւ քանի հատուկ ծրար է հանձնվում տեղափոխվող քվեատուփը ուղեկցող հանձնաժողովի անդամին).

Քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձինք, սեփական ցանկությամբ, կարող են ներկա գտնվել տեղափոխվող քվեատուփի միջոցով անցկացվող քվեարկությանը.

Տեղափոխվող քվեատուփի միջոցով քվեարկության անցկացման ժամանակ մեքենայի օգտագործման դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է մեքենայում տեղ ապահովել քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձանից՝ վիճակահանությամբ սահմանված երկու դիտորդի համար.

Հիշեցեք, տեղափոխվող քվեատուփի միջոցով ընտրության մասնակցին մարկավորում չի անցկացվում.

Տեղափոխվող քվեատուփի միջոցով քվեարկության անցկացումը ավարտվում է ժամը 19.00-ին. Քվեարկության ավարտից հետո անհապաղ կնքվում է քվեատուփի մեջ հատուկ ծրարներ գցելու բացվածքը (պետք է այնպես կնքվի, որ առանց կնիքի խախտման հնարավոր չլինի դրա բացումը). Քվեարկության օրը ամենաուշը մինչեւ ժամը 20.00 տեղափոխվող քվեատուփը պետք է վերադարձվի ընտրական տեղամաս.

Տեղափոխվող քվեատուփը ուղեկցող հանձնաժողովի անդամը (քվեարկության շինություն վերադառնալուց հետո) տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին պետք է հանձնի չօգտագործված քվեաթերթիկները. Հանձնաժողովի քարտուղարը պետք է կտրի նման քվեաթերթիկների անկյունը, գրանցի. «փչացած է» եւ հանձնաժողովի նախագահի ստորագրությունից հետո, մինչեւ քվեարկության ավարտը, պահի. Ստույգ գրանցման նպատակով, հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գրանցման գրքի 4-րդ էջում պետք է նշի փչացած քվեաթերթիկների քանակությունը.



## ԳԼՈՒԽ XI. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՒՄԻ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Քվեարկության օրը քվարկության շինությունում կարգուկանոնի պահպանումը ղեկավարում է եւ դրա համար պատասխանատվություն է կրում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից քվեարկության շինությունում կարգուկանոնի պահպանման նպատակով ընդունված որոշումների կատարումը պարտադիր է ընտրական հանձնաժողովի անդամների, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց եւ ընտրողների համար.

- ✓ Ձինված անձանց մուտքը քվեարկության շինություն արգելվում է.
- ✓ Քվեարկության վայր ուստիկանության աշխատակիցների մուտքը թույլատրելի է միայն հանձնաժողովի նախագահի պահանջից հետո եւ միայն այդ դեպքում, եթե այն անհրաժեշտ է հասարակական կարգուկանոնի պահպանման համար.
- ✓ Հասարակական կարգուկանոնի խախտումը վերացնելուն պես, հանձնաժողովի նախագահի համաձայնության դեպքում, ուստիկանության աշխատակիցները հեռանում են քվեարկության շինությունից.

## ԳԼՈՒԽ XII. ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՓՎԿՈՒՄԸ

Ուղիղ ժամը 20.00-ին քվեարկության շինությունը փակվում է. Այդ ժամանակի համար հերթում կանգնած ընտրողները կարող են քվեարկել. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից մեկը գրանցման գրքում նշում է հերթում կանգնած ընտրողների անուն-ազգանունները եւ նրանց թվի մասին տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որը հայտարարում է, որ քվեարկությանը կարող են մասնակցել միայն հերթում կանգնած ընտրողները.

Հանձնաժողովի անդամը ուշացումով եկած ընտրողներին պետք է պարզաբանի, որ նրանք չեն կարող մասնակցել ընտրություններին. Եթե քվեարկության սենյակը թույլ է տալիս, ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը հերթում կանգնած ընտրողներին պետք է թողինի մուտք գործեն քվեարկության սենյակ եւ փակի ընտրական տեղամասը.

Հիշեցեք.

Քվեարկության ավարտից հետո քվեատուփի՝ հատուկ ծրարներ գցելու բացվածքը կնքվում է.

Երբ վերջին ընտրողը ավարտում է քվեարկությունը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պետք է ապահովի, որ բոլոր անձինք՝ ձայների հաշվարկման ժամանակ քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձանցից բացի, թողնեն ընտրական տեղամասը. Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գրանցման գրքում պետք է գրանցի ձայների հաշվարկման ժամանակ քվեարկության շինությունում գտնվող անձանց ով լինելը.

Ձորամասում բացված ընտրական տեղամասում, քվեարկության ավարտից հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովը պետք է կնքի քվեատուփը, ընտրողների ցուցակը, չօգտագործված եւ փչացած քվեաթերթիկներն ու հատուկ ծրարները. Կնքված փաստաթղթերը եւ քվեատուփը պետք է հանձնվի մարզային ընտրական հանձնաժողովի կողմից նախօրոք սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովին, որը հետագա գործողությունները իրականացնում է տեղափոխվող քվեատուփի համար սահմանված կարգով. Այս երկու ընտրական տեղամասերի արդյունքները ձեւակերպվում են մեկ արձանագրությամբ.

# ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ XIII. ՄԻՆՉԵՎ ՔՎԵԱՏՈՒՓԻ ԲԱՑՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ որոշում է առնվազն 3 հաշվարկողների (հաշվարկողների առավելագույն թիվը պետք է որոշվի քվեաթերթիկ(ներ)ում գրանցված ընտրական սուբյեկտների թվից ելնելով)։

Հաշվարկողներին որոշելու համար վիճակահանությունը տարվում է նույն կարգով, ինչպես մինչև քվեարկությունը հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաժանման ժամանակ։ Վիճակահանության արդյունքները հանձնաժողովի քարտուղարը գրանցում է գրանցման գրքի 2-րդ էջում։

Ընտրական տեղամասում գտնվող դիտորդները փոխհամաձայնությամբ պետք է ընտրեն երկու դիտորդ, որոնք հաշվարկողների կողքին կհետեւեն ձայների հաշվարկման գործողությանը։

Քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձինք պետք է գտնվեն ձայները հաշվարկողներից մեկ մետր հեռավորության վրա։

### Հիշեցեք.

Եթե դիտորդները փոխհամաձայնությամբ չեն կարողանա ընտրել երկու դիտորդի, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության շինությունում գտնվող դիտորդների շարքից վիճակահանությամբ ընտրում է երկու դիտորդի։

Դիտորդները իրավունք ունեն հետեւելու հաշվարկման ողջ ընթացքին, նշելու հաշվարկողների սխալները, պահանջելու սխալների ուղղում, իսկ պահանջի չբավարարման դեպքում, բողոք ներկայացնել մարզային ընտրական հանձնաժողովին կամ դատարանին։

Քվեարկության շինությունը պետք է նախապատարաստել ձայների հաշվարկման համար։ Նախապատրաստեք բոլոր այն նյութերը, որոնք անհրաժեշտ են ձայների հաշվարկման գործողության համար։


- Ընտրողների միասնական ցուցակը, հատուկ ցուցակը եւ ցուցակի հավելվածը,
- Փչացած քվեաթերթիկները,
- Չօգտագործած քվեաթերթիկները,
- Սոմերը, լամպերը (էլեկտրաէներգիայի ընդհատման դեպքում),
- Կալկուլյատորը։

Հանձնաժողովի քարտուղարը լրացնում է քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունները, ցուցադրական արձանագրությունները եւ գրանցման գիրքը։

### Զբացեք քվեատուփը, քանի դեռ չեք պահպանել հետեւյալ գործողությունների հերթականությունը.

- I. Հաշվարկողները հաշվում են ընտրողների թիվը ընտրողների հատուկ ցուցակում, վերոնշյալ տվյալը հանձնաժողովի քարտուղարը գրանցում է գրանցման գրքում, ցուցադրական արձանագրությունում եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության 2-րդ սյունակում։
- II. Հաշվարկողները հաշվում են ընտրողների ստորագրությունների քանակը ընտրողների միասնական ցուցակում, հատուկ ցուցակում, ընտրողների ցուցակի հավելվածում, որոնց գումարմամբ սահմանվում է ընտրություններին մասնակից ընտրողների ընդհանուր թիվը։ Ստացված քանակությունը հանձնաժողովի քարտուղարը գրանցում է գրանցման գրքում, ցուցադրական արձանագրությունում եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության 4-րդ սյունակում։
- III. Հաշվարկողները հաշվում են չօգտագործված քվեաթերթիկները, որոնց քանակությունը հանձնաժողովի քարտուղարը գրանցում է գրանցման գրքում, ցուցադրական արձանագրությունում եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության 6-րդ սյունակում։

- IV. Հաշվարկողները հաշվում են փչացած քվեաթերթիկները, որոնց քանակությունը հանձնաժողովի քարտուղարը գրանցում է գրանցման գրքում, ցուցադրական արձանագրությունում եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության 7-րդ սյունակում.
- V. Քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության 7-րդ սյունակի (փչացած քվեաթերթիկների) լրացումից հետո, հանձնաժողովի քարտուղարը պետք է ստուգի արձանագրության մեջ գրանցված տվյալները.
  - ✓ Չօգտագործված քվեաթերթիկների քանակությունը (6-րդ սյունակ) պետք է հավասար լինի ստացված քվեաթերթիկների քանակությունից (5-րդ սյունակ) հանած քվեարկությանը մասնակիցների ընդհանուր թիվը (4-րդ սյունակ), հանած փչացած քվեաթերթիկների քանակությունը (7-րդ սյունակ). Եթե հավասարությունը չհաստատվեց, պետք է վերահահաշվարկվեն.
    - չօգտագործված քվեաթերթիկների քանակությունը,
    - ցուցակում ստորագրությունների քանակությունը
    - փչացած քվեաթերթիկների քանակությունը
- VI. Հաշվարկողները 3 չափերի ծրարների մեջ առանձին-առանձին տեղավորում եւ կնքում են ընտրողների միասնական ցուցակը, հատուկ ցուցակը (մասեւ քվեարկության օրը հատուկ ցուցակում գրանցված ընտրողների կողմից ներկայացված փաստաթղթերի ֆոտոպատճենները) եւ ընտրողների ցուցակի հավելվածը. Ծրարի վրա գրվում է փաստաթղթերի անվանումը, ընտրական մարզի եւ տեղամասի համարը. Ծրարը ստորագրում են հաշվարկողները եւ հանձնաժողովի նախագահը.
- VII. Փչացած քվեաթերթիկները դրվում են ծրարի մեջ եւ կնքվում. Ծրարի վրա գրվում է ընտրությունների տեսակը (մեծամասնական/համամասնական) , ընտրական փաստաթղթերի անվանումը (փչացած քվեաթերթիկներ), ծրարի մեջ դրված քվեաթերթիկների քանակությունը, ընտրական մարզի եւ տեղամասի համարը. Ծրարը ստորագրում են հաշվարկողներն ու հանձնաժողովի նախագահը.
- VIII. Չօգտագործած քվեաթերթիկների բլոկնոտները փաթեթավորվում են ծրարի մեջ եւ կնքվում. Ծրարի վրա գրվում է ընտրությունների տեսակը (մեծամասնական/համամասնական) , ընտրական փաստաթղթերի անվանումը (չօգտագործած քվեաթերթիկներ), ծրարի մեջ դրված քվեաթերթիկների քանակությունը, ընտրական մարզի եւ տեղամասի համարը. Ծրարը ստորագրում են հաշվարկողներն ու հանձնաժողովի նախագահը.



Քվեաթերթիկների բոլոր փաթեթները փաթեթավորվում եւ կնքվում են այնպես, որ առանց կնիքի խախտման հնարավոր չլինի փաթեթից քվեաթերթիկի դուրսբերումը կամ դնումը.

Նկատի ունեցեք.

Ձայների հաշվարկման գործընթացը պետք է ընթանա անարգել մինչեւ ձայների հաշվարկման գործողության ավարտը.

Քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունում գրանցված բոլոր տվյալները պետք է հայտարարվեն բարձրաձայն, ի գիտություն բոլորի եւ դրանք գրանցվեն ցուցադրական արձանագրության մեջ.

## ՉԼՈՒՄ XIV. ՔՎԵԱՏՈՒՓԵՐԻ ԲԱՅՈՒՄ

Նրանից հետո, երբ հանձնաժողովի քարտուղարը լրացնում է քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունները՝ 7-րդ սյունակը ներառյալ, հանձնաժողովի նախագահը կարող է սկսել քվեատուփերի բացման գործողությունը.

Հանձնաժողովի նախագահը տեղափոխվող քվեատուփի բացման նպատակով իրականացնում է հետևյալ գործողությունները.

- Հանձնաժողովի անդամներին եւ քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է տեղափոխվող քվեատուփի կնիքի ամբողջությունը եւ կնիքի համարը համեմատում է քվեարկության օրվա գրանցման գրքում նշված համարի հետ. եթե կնիքի համարը տարբերվում է գրանցման գրքում նշված համարից, ապա տեղափոխվող քվեատուփը կնքվում է, հանձնաժողովը ընդունում է որոշում եւ ձայների հաշվարկման գործողությունից հետո այլ փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է մարզային ընտրական հանձնաժողովին.
- Տեղափոխվող քվեատուփի բացումից հետո ստուգում է վերահսկիչ թերթիկը. եթե վերահսկիչ թերթիկը չի գտնվում կամ այն նշանակալիորեն տարբերվում է հանձնաժողովի նախագահի մոտ պահված վերահսկիչ թերթիկից, բոլոր ծրարները անհապաղ փաթեթավորվում եւ կնքվում են. Հանձնաժողովը ընդունում է որոշում եւ ձայների հաշվարկումից հետո այլ փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է մարզային ընտրական հանձնաժողովին.
- Համեմատում է տեղափոխվող քվեատուփի մեջ եղած ծրարների քանակությունը եւ ընտրողների ցուցակի հավելվածում առկա ստորագրած ընտրողների քանակությունը. եթե ծրարների քանակությունը ավելի է, ապա տեղափոխվող քվեատուփի մեջ եղած ծրարները կնքվում են, գրվում է «անվավեր». Հանձնաժողովը ընդունում է որոշում եւ ձայների հաշվարկումից հետո այլ փաստաթղթերի հետ միասին հանձնվում է մարզային ընտրական հանձնաժողովին.

Դրանից հետո հանձնաժողովի նախագահը հիմնական քվեատուփի բացման նպատակով իրականացնում է հետևյալ գործողությունները.

- Հանձնաժողովի անդամներին եւ քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է հիմնական քվեատուփի կնիքի ամբողջությունը եւ կնիքի համարը համեմատում է քվեարկության օրվա գրանցման գրքում նշված համարի հետ. եթե կնիքի համարը տարբերվում է գրանցման գրքում նշված համարից, ապա հանձնաժողովը ընդունում է բոլոր փաստաթղթերը կնքելու որոշում եւ ներկայացնում է մարզային ընտրական հանձնաժողովին.

Եթե կնիքի ամբողջությունը խախտված է, սակայն հանձնաժողովը գտնում է, որ դա չի հանգեցրել ընտրական օրենսգրքի պահանջների խախտում, հանձնաժողովի որոշմամբ շարունակվում է քվեարկության արդյունքների հանրագումարման գործողությունը. Հակառակ դեպքում, քվեատուփը կնքվում է եւ կնքված քվեատուփը, այլ ընտրական փաստաթղթերը եւ հանձնաժողովի որոշումը անհապաղ հանձնվում է մարզային ընտրական հանձնաժողովին.

- Հիմնական քվեատուփի բացումից հետո ստուգում է վերահսկիչ թերթիկը. եթե վերահսկիչ թերթիկը չի գտնվում կամ այն նշանակալիորեն տարբերվում է հանձնաժողովի նախագահի մոտ պահված վերահսկիչ թերթիկից, հանձնաժողովը ընդունում է ընտրական բոլոր փաստաթղթերը կնքելու որոշում եւ ներկայացնում է մարզային ընտրական հանձնաժողովին.

Դրանից հետո հաշվարկողները իրար են խառնում հիմնական եւ տեղափոխվող քվեատուփերի հատուկ ծրարները.

Քվեատուփերում գտնված վերահսկիչ թերթիկները, նաեւ համեմատելու համար վերահսկիչ թերթիկը, պետք է կցվեն մարզային ընտրական հանձնաժողովին հանձնվող ընտրական փաստաթղթերին.

## ԳԼՈՒԽ XV. ՔՎԵԱՔԵՐՔԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Վիճակահանությամբ որոշված հաշվարկողներն եւ երկու դիտորդները տեղ են զբաղեցնում սեղանի մոտ այնպես, որ հակառակ կողմում՝ մեկ մետր հեռավորության վրա գտնվեն հանձնաժողովի անդամներն եւ քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձինք:

Նկատի ունեցեք.

Սեղանի վրա, որտեղ իրականացվելու է քվեաթերթիկների տեսակավորումը, չպետք է գտնվեն ընտանական փաստաթղթերի ոչ մի տեսակ, գրենական պիտույք, նաեւ չպետք է ունենա ծածկոց:

Հաշվարկողները քվեաթերթիկները տեսակավորում են հետեւյալ կարգի պահպանմամբ. (տես տեսակավորման դիագրաման 30-րդ էջում):

➤ Առաջին հաշվարկողը հատուկ ծրարներից դուրս է բերում քվեաթերթիկները եւ ստուգում է, թե քանի քվեաթերթիկ է դրված հատուկ ծրարի մեջ. եթե եթե ծրարի մեջ գտնվեց երկուսից ավելի քվեաթերթիկ (ք. Թբիլիսիի սակրեբուլոյի ընտրության դեպքում՝ մեկից ավելի), ապա դրանում գտնվող բոլոր քվեաթերթիկները անվավեր են. Առաջին հաշվարկողը քվեաթերթիկները հանձնում է երկրորդ հաշվարկողին, իսկ հատուկ ծրարները դնում է առանձին:

➤ Երկրորդ հաշվարկողը ստուգում է քվեաթերթիկների իսկությունը (տես քվեաթերթիկների անվավերության դեպքերը) եւ հայտարարում է, թե ում օգտին է տրված ձայնը՝ ըստ մեծամասնական եւ համամասնական ընտրությունների կամ դրա անվավերության դեպքում՝ անվավերության պատճառը. Երկրորդ հաշվարկողը մի տեսակի քվեաթերթիկները հանձնում է երրորդ հաշվարկողին, իսկ երկրորդ տեսակը՝ չորրորդ հաշվարկողին:

Այն դեպքում, եթե հանձնաժողովի որեւէ անդամ կամ քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող որեւէ անձ չի համաձայնվում քվեաթերթիկի իսկության մասին երկրորդ հաշվարկողի որոշման հետ, նման քվեաթերթիկը դրվում է առանձին, կասկածելի քվեաթերթիկների հետ (հաշվարկողը պարտավոր է կատարել այդ պահանջը):

➤ Երրորդ եւ չորրորդ հաշվարկողները տեսակավորում են քվեաթերթիկները ըստ ընտրական սուբյեկտների տրված ձայների, բոլորի դեմ տրված ձայների, անվավեր քվեաթերթիկների եւ կասկածելի քվեաթերթիկների:

Առանձին են դրվում չպարզեցված տեսակի քվեաթերթիկները, որոնք ընտրական փաստաթղթերից առանձին ներկայացվում են մարզային ընտրական հանձնաժողովին. Չպարզեցված տեսակի քվեաթերթիկ կհամարվի քվեատուփի մեջ հայտնված ցանկացած տեսակի թերթիկը, որն չի համապատասխանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պաշտոնապես սահմանված տեսակին:


Անվավեր քվեաթերթիկների բացահայտումը.

### **Քվեաթերթիկը անվավեր է այն դեպքում, եթե.**

- 1) Քվեաթերթիկը քվեատուփի մեջ հայտնվեց առանց հատուկ ծրարի,
- 2) Հատուկ ծրարի մեջ հայտնվեց սահմանվածից ավելի քվեաթերթիկ,
- 3) Քվեաթերթիկը հաստատված չէ գրանցողի ստորագրությամբ կամ հատուկ կնիքով,
- 4) Հնարավոր չէ պարզել, թե որ սուբյեկտի օգտին է ընտրողը ձայն տվել,
- 5) Ընտրողը ձայնը տվել է մեկից ավելի սուբյեկտի,
- 6) Ընտրողը ձայն չի տվել ոչ մի սուբյեկտի,
- 7) Քվեաթերթիկը պատկանում է այլ ընտրական տեսադամին,
- 8) Քվեաթերթիկը, որի վրա դրված կնիքը չի հանդիսանում տեղամասային ընտրական հանձնաժողովի (գրանցողի) պաշտոնական կնիքը:

Անվավեր չի համարվում այն քվեաթերթիկը, որի վրա ակնհայտ է ընտրողի ոռշումը՝ ձայնը տալ որեւէ սուբյեկտի:

Նաեւ անվավեր չի համարվում այն քվեաթերթիկը, որի վրա ընդգծված են բոլոր սուբյեկտների անվանումները կամ դրանց հարթական համարները. Նման քվեաթերթիկը համարվում է բոլորի դեմ տրված:



O - անվավեր  
 X - բոլորի դեմ  
 ? - կասկածելի

Քվեաթերթիկների տեսակավորումը ավարտելուց հետո, հանձնաժողովի անդամները քվեարկությանը որոշում են կասկածելի համարվող քվեաթերթիկների իսկնության հարցը. իսկական համարված քվեաթերթիկը ավելացվում է իսկական քվեաթերթիկներին, իսկ անվավեր ճանաչված անվավեր հայտարարված քվեաթերթիկներին.

Քվեաթերթիկների տեսակավորումից հետո հաշվարկողները հաշվում են քվեաթերթիկները (առաջին եւ երկրորդ հաշվարկողները հաշվում են համամասնական քվեաթերթիկները, իսկ երրորդ եւ չորրորդ հաշվարկողները՝ մեծամասնական քվեաթերթիկները).

- Անվավեր քվեաթերթիկները, անվավեր քվեաթերթիկների քանակությունը հանձնաժողովի քարտուղարը գրանցում է քվեարկության թրվա գրանցման գրքում, ցուցադրական արձանագրության եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության 8-րդ սյունակում. անվավեր քվեաթերթիկների վերելից գրվում է «անվավեր» եւ ստորագրում են հաշվարկողներն ու հանձնաժողովի նախագահը.
- Ըստ ընտրական սուբյեկտների տեսակավորված քվեաթերթիկները. Առաջին հաշվարկողը հաշվում է ըստ ընտրական սուբյեկտների տեսակավորված համամասնական քվեաթերթիկները. Հաշվարկված քվեաթերթիկները դրվում է տասական, միմյանց հետ քուղակապված. Երկրորդ հաշվարկողը երկրորդ անգամ հաշվում/ստուգում է տասական դասավորված քվեաթերթիկները. Երրորդ հաշվարկողը հաշվում է ըստ ընտրական սուբյեկտների մեծամասնական քվեաթերթիկները. Հաշվարկված քվեաթերթիկները դրվում է տասական, միմյանց հետ քուղակապված. Չորրորդ հաշվարկողը երկրորդ անգամ հաշվում/ստուգում է տասական դասավորված քվեաթերթիկները.

Հանձնաժողովի նախագահը հայտարարում է ընտրական յուրաքանչյուր սուբյեկտի կողմից ստացված ձայների քանակությունը մեծամասնական եւ համամասնական ընտրություններից ելնելով. Հանձնաժողովի քարտուղարը այդ տվյալները անհապաղ գրանցում է քվեարկության օրվա գրանցման գրքում, ցուցադրական արձանագրություններում եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրություններում.

➤ Բոլոր սուբյեկտների դեմ տրված ձայներ/քվեաթերթիկները. Բոլոր սուբյեկտների դեմ տրված ձայների քանակությունը գրանցվում է քվեարկության օրվա գրանցման գրքում, ցուցադրական արձանագրություններում եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրություններում.

Հանձնաժողովի քարտուղարը սուբյեկտներին տրված ձայների ընդհանուր քանակության եւ բոլոր սուբյեկտների դեմ տրված ձայների քանակության գումարումով պարզում է իսկական քվեաթերթիկների քանակությունը. Իսկական քվեաթերթիկների քանակությունը հանձնաժողովի քարտուղարը գրանցում է քվեարկության օրվա գրանցման գրքում, ցուցադրական արձանագրություններում եւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունների 9-րդ սյունակում.

Հատկանշական է, որ իսկական (9-րդ սյունակ) եւ անվավեր քվեաթերթիկների (8-րդ սյունակ) քանակների գումարը պետք է լինի հավասար (կամ պետք է գերազանցի) ընտրությունների մասնակիցների թվաքանակին (4-րդ սյունակ). Եթե հավասարությունը չհաստատվեց, հանձնաժողովի նախագահը հաշվարկողներին ցուցում է տալիս վերահաշվարկել.

- ✓ Ընտրական սուբյեկտների կողմից ստացված ձայներ/քվեաթերթիկները,
- ✓ Անվավեր քվեաթերթիկները,
- ✓ Սուլորի դեմ տրված ձայներ/քվեաթերթիկները.

Եթե հավասարությունը կրկին չհաստատվի, տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքները պետք է սահմանի ձեռքով լրացված փաստաթղթերի հիման վրա.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների հանրագումարային

№ \_\_\_\_\_ ընտրական մարզի անվանումը ընտրական մարզ

**արձանագրություն**

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ

№ \_\_\_\_\_ ընտրական տեղամասի անվանումը ընտրական տեղամաս

Կրկնական քվեարկություն

1	Միասնական ցուցակում ընտրողների թվաքանակը	□ □ □ □
2	Ընտրողների թվաքանակը հատուկ ցուցակում	□ □ □ □
3	Ընտրություններին մասնակից ընտրողների ստորագրությունների քանակը ընտրողների ցուցակներում (ա) ժամը 12.00-ի համար □ □ □ □   (բ) ժամը 17.00-ի համար □ □ □ □	□ □ □ □
4	Ընտրություններին մասնակից ընտրողների ընդհանուր թվաքանակը	□ □ □ □
5	Ստացված քվեաթերթիկների ընդհանուր քանակությունը	□ □ □ □
6	Չօգտագործված քվեաթերթիկների քանակությունը	□ □ □ □
7	Փչացած քվեաթերթիկների քանակությունը	□ □ □ □
8	Անվավեր ճանաչված քվեաթերթիկների քանակությունը	□ □ □ □
<b>Տրված ձայների քանակությունը</b>		
<input type="radio"/>	Ընտրական սուբյեկտի անվանումը	□ □ □ □
<input type="radio"/>	Ընտրական սուբյեկտի անվանումը	□ □ □ □
<input type="radio"/>	Ընտրական սուբյեկտի անվանումը	□ □ □ □
<input type="radio"/>	Ընտրական սուբյեկտի անվանումը	□ □ □ □
<input type="radio"/>	Ընտրական սուբյեկտի անվանումը	□ □ □ □
<input type="radio"/>	Ընտրական սուբյեկտի անվանումը	□ □ □ □
<input type="radio"/>	Ընտրական սուբյեկտի անվանումը	□ □ □ □
<input type="radio"/>	Ընտրական սուբյեկտի անվանումը	□ □ □ □
<input type="radio"/>	Ընտրական սուբյեկտի անվանումը	□ □ □ □
<input type="radio"/>	Ընտրական սուբյեկտի անվանումը	□ □ □ □
	<b>Բոլորի դեմ</b>	□ □ □ □
9	Իսկական քվեաթերթիկների քանակությունը (Տրված ձայների քանակության գումարը)	□ □ □ □



Տարբերվող կարծիք

№	Արձանագրության տվյալները, որոնց հետ հանձնաժողովի անդամը համաձայն չէ	Հանձնաժողովի անդամի անուն-ազգանունը	Հանձնաժողովի անդամի ստորագրությունը

Տեղանասային ընտրական հանձնաժողովի կնիքի համար

Գրանցողների կնիքների համարները

Հանձնաժողովի նախագահ \_\_\_\_\_ / \_\_\_\_\_

Նախագահի տեղակալ \_\_\_\_\_ / \_\_\_\_\_

Քարտուղար \_\_\_\_\_ / \_\_\_\_\_

Հանձնաժողովի անդամներ:

4. \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ 7. \_\_\_\_\_ / \_\_\_\_\_

5. \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ 8. \_\_\_\_\_ / \_\_\_\_\_

6. \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ 9. \_\_\_\_\_ / \_\_\_\_\_

Հաստատման ամսաթիվը - 20\_\_ թվականի " \_\_\_\_\_ " \_\_\_\_\_ ժամը \_\_\_\_\_ րոպե

կ.տ.

կ.տ.

կ.տ.

կ.տ.

կ.տ.




Գրանցման № \_\_\_\_\_, Գրանցման ամսաթիվը \_\_\_\_\_ 200\_\_ թվականի, \_\_\_\_\_ ժամը \_\_\_\_\_ րոպե

## ԳԼՈՒԽ XVI. ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔՈՒՂԱԿԱՊՈՒՄԸ ԵՎ ԿՆՔՈՒՄԸ

Քվեաթերթիկների հաշվումից հետո հաշվարկողները քուղակապում եւ կնքում են (առաջին եւ երկրորդ հաշվարկողները քուղակապում/կնքում են համամասնական քվեաթերթիկները, իսկ երրորդ եւ չորրորդ հաշվարկողները՝ մեծամասնական քվեաթերթիկները)։

- Անվավեր քվեաթերթիկները. այլ ընտրական տեղամասերի համար նախատեսված անվավեր քվեաթերթիկները դրվում են առանձին ծրարի մեջ եւ դրանց քանակությունը նշվում է միայն գրանցման գրքում. Հաշվարկողները փաթեթների վրա պետք է գրեն ընտրությունների անվանումը (մեծամասնական/ համամասնական), ընտրական փաստաթղթերի անվանումը (անվավեր քվեաթերթիկներ), փաթեթում գտնվող քվեաթերթիկների քանակությունը, ընտրական մարզի եւ տեղամասի համարը. Փաթեթը ստորագրում են հաշվարկողներն ու հանձնաժողովի նախագահը.
- Ընտրական սուբյեկտի կողմից ստացված ձայն/քվեաթերթիկները. յուրաքանչյուր 10 քվեաթերթիկը միմյանց ամրացվում է մետաղե ամրակով (ստեպլերով). Յուրաքանչյուր փաթեթի վրա, ինչպես լրացված, այնպես էլ թերի, վերելից գրվում է կապված քվեաթերթիկների քանակությունը. Ընտրական սուբյեկտի կողմից ստացված ձայն/քվեաթերթիկները կապվում են առանձին-առանձին. Յուրաքանչյուր փաթեթի վրա հաշվարկողները պետք է գրեն ընտրությունների անվանումը (մեծամասնական/ համամասնական), ընտրական սուբյեկտի անվանումը, սուբյեկտի կողմից ստացված ձայների քանակությունը, ընտրական մարզի եւ տեղամասի համարը. Փաթեթը ստորագրում են հաշվարկողներն ու հանձնաժողովի նախագահը.
- Բոլոր սուբյեկտների դեմ տրված ձայներ/քվեաթերթիկները. հաշվարկողները փաթեթի վրա պետք է գրեն ընտրությունների անվանումը (մեծամասնական/ համամասնական), ընտրական փաստաթղթերի անվանումը (բոլորի դեմ տրված ձայներ/քվեաթերթիկներ), փաթեթում գտնվող քվեաթերթիկների քանակությունը, ընտրական մարզի եւ տեղամասի համարը. Փաթեթը ստորագրում են հաշվարկողներն ու հանձնաժողովի նախագահը.

Քվեաթերթիկների յուրաքանչյուր փաթեթը քուղակապվում եւ կնքվում է այնպես, որ առանց կնիքը խախտելու հնարավոր չլինի փաթեթից հանել կամ ավելացնել քվեաթերթիկ.

 <p><b>Անվավեր քվեաթերթիկներ</b>                  Ընտրությունների անվանումը                  Քվեաթերթիկների քանակությունը                  Ընտրական տեղամաս №                  Ընտրական մարզ №</p>	 <p><b>Ընտրական սուբյեկտի անվանումը</b>                  Ընտրությունների անվանումը                  Ստացված ձայների քանակությունը                  Ընտրական տեղամաս №                  Ընտրական մարզ №</p>	 <p><b>Բոլորի դեմ տրված ձայներ</b>                  Ընտրությունների անվանումը                  Քվեաթերթիկների քանակությունը                  Ընտրական տեղամաս №                  Ընտրական մարզ №</p>
---	--	---

եղամասային ընտրական հանձնաժողովը չի հաշվում օգտագործած հատուկ ծրարները եւ չի հանձնում մարզային ընտրական հանձնաժողովին. Մարզային ընտրական հանձնաժողովին հանձնվում են միայն չօգտագործած հատուկ ծրարները՝ առանց փաթեթավորման եւ կնքման.

## ՉԼՈՒԽ XVII. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության բլոկն ուտը կազմված է № 01-№02 թերթերից, նաեւ տեղամասային ընտրական հանձնաժողովին պատկանող արձանագրությունից.

Քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության (արձանագրության բլոկն ուտի կազմի ետեւի թերթի) լրացումից հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովը որոշմամբ պետք է հաստատի քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունը. Որոշումը ընդունված է համարվում, եթե այն պաշտպանում է ներկաների մեծամասնությունը, սակայն առնվազն հանձնաժողովի ցուցակային կազմի մեկ երրորդը.

Հիշեցեք.

Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ (նույնիսկ առանձին կարծիք արտահայտելու դեպքում) պարտավոր է ստորագրել արձանագրությունը, որով հաստատվում է նրա գտնվելը ընտրական տեղամասում. Արձանագրությունը պետք է վավերացվի հանձնաժողովի կնիքով.

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը համաձայն չէ արձանագրության մեջ գրանցված տվյալների հետ, նա իրավունք ունի հանրագումարային արձանագրության «Առանձնահատուկ կարծիք» սյունակում կատարել գրանցում եւ ստորագրել.

Քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունում տվյալների փոփոխումը անթույլատրելի է.
---

Եթե հանրագումարային արձանագրության լրացման ժամանակ թույլ է տրվել սխալ, հանրագումարային արձանագրությունում դրա ուղղման համար, համապատասխան տվյալի դիմաց, անմիջապես արվում է գրանցում. «ուղղված է». Ընտրական հանձնաժողովը կազմում է արձանագրություն, որտեղ նշվում է հանրագումարային արձանագրությունում կատարված ուղղումը եւ դրա կատարման ամսաթիվն ու ժամանակը. Այդ արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները, որոնք ներկա են նիստին. Արձանագրությունը կնքվում է հանձնաժողովի կնիքով եւ գրանցվում է հանձնաժողովի գրանցման մատյանում. Այդ արձանագրությունը պետք է կցվի հանրագումարային արձանագրությանը.

Տեղամասային ընտրական հանձնաժողովին պատկանող հարագումարային արձանագրության հաստատումից հետո, հանձնաժողովի քարտուղարը (ելենելով այդ արձանագրությունից) պետք է լրացնի արձանագրությունների բլոկն ուտների №01-№02 էջերը.

Քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության №01 եւ №02 էջերը (կցված հանձնաժողովի անդամների առանձնահատուկ կարծիքներով), նաեւ տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումը քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության հաստատման մասին, հանձնվում է մարզային ընտրական հանձնաժողովին.

Տեղամասային ընտրական հանձնաժողովը №02 հանրագումարային արձանագրության քսերոպատճենը (կցված հանձնաժողովի անդամների առանձնահատուկ կարծիքներով), նրանց պահանջի դեպքում անհապաղ հանձնում է կուսակցության/ ընտրական դաշինքի/նախաձեռնող խմբի ներկայացուցիչներին եւ դիտորդ կազմակերպությունների դիտորդներին. Արձանագրության քսերոպատճենը պետք է վավերացվի տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով եւ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ու քարտուղարի ստորագրություններով (այդ արձանագրության իրավաբանական ուժը նույնն է, ինչ №№01-02-ը)

Հանձնաժողովի քարտուղարը գրանցման մատյանում պետք է գրանցի տրված ընտրական փաստաթղթերը եւ տրված արձանագրություններին տա գրանցման համարներ. Արձանագրության ընդունումը ներկայացուցիչ/դիտորդը գրանցման գրքում եւ գրանցման մատյանում հաստատում է ստորգրությամբ.

Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ապահովել արձանագրության (տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով, նախագահի եւ հանձնաժողովի քարտուղարի ստորագրությամբ հաստատված №02 արձանագրության քսերոպատճենի) փակցումը՝ ընդհանուր ծանոթության համար.

## ԳԼՈՒԽ XVIII. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԶԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության լրացում/հաստատումից եւ արձանագրությունների պատճենների հանձնումի ավարտից հետո, հաշվարկողները պատրաստում են ընտրական փաստաթղթերը մարզային ընտրական հանձնաժողովին հանձնելու համար.

- Գրանցման գիրքը, տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցման մատյանը եւ դիմումները (բողոքները) հավաքվում եւ կնքվում է մի ծրարի մեջ. Ծրարի վրա գրվում է ընտրական փաստաթղթի անվանումը, ընտրական մարզի եւ տեղամասի համարը. Ծրարը ստորագրում են հաշվարկողները եւ հանձնաժողովի նախագահը. Նշյալ ծրարը կնքված մյուս փաստաթղթերից առանձին ներկայացվում է մարզային ընտրական հանձնաժողովին.
  - Հանձնաժողովի քարտուղարը վերանայում է գրանցման գրքի գրանցված էջերը եւ վերջին լրացված կամ դրան հաջորդող էջում նշում է լրացված էջերի քանակությունը, գրքի փակման ամսաթիվը եւ ժամանակը, ստորագրում է եւ կնքում տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը եւ հանձնաժողովի անդամները նույն էջին ստորագրություններով վավերացնում են գրանցման գրքի փակման փաստը.
  - Հանձնաժողովի քարտուղարը գրանցման մատյանի երկու մասում էլ վերջին գրանցումներից հետո կատարում է նշում. «Մատյանը փակված է», նշում է ամսաթիվը, ստույգ ջանանակը եւ ստորագրում է.
- Տեղամասային ընտրական հանձնաժողովին պատկանող հանրագումարային արձանագրությունը եւ ցուցադրական արձանագրությունները կնքվում են. Ծրարի վրա գրվում է ընտրական փաստաթղթի անվանումը, ընտրական մարզի եւ տեղամասի համարը. Ծրարը ստորագրում են հաշվարկողները եւ հանձնաժողովի նախագահը.
- Գրանցողների կնիքները կնքվում են, ծրարի վրա գրվում է ընտրական փաստաթղթի անվանումը, ընտրական մարզի եւ տեղամասի համարը. Ծրարը ստորագրում են հաշվարկողները եւ հանձնաժողովի նախագահը
- Հանձնաժողովի կնիքը կնքվում է, ծրարի վրա գրվում է ընտրական փաստաթղթի անվանումը, ընտրական մարզի եւ տեղամասի համարը. Ծրարը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը եւ հանձնաժողովի մյուս անդամները.

Առանձին-առանձին փաթեթավորված ընտրական փաստաթղթերը դրվում են մեծ պարկի/տուփի մեջ (համամասնական եւ մեծամասնական ընտրական փաստաթղթերը դրվում են տարբեր պարկերում), որը չի կնքվում. Պարկին ամրացվում է տիտղոսաթերթ ընտրական տեղամասի համարի նշումով եւ ներկայացվում է մարզային ընտրական հանձնաժողովին.

Ընտրական փաստաթղթերը մարզային ընտրական հանձնաժողովին ներկայացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ լիազորված հանձնաժողովի անդամը.

Տեղամասային ընտրական հանձնաժողովը մարզային ընտրական հանձնաժողովին քվեարկության ավարտից անմիջապես հետո պետք է ներկայացնի.

- Քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունները (նաեւ արձանագրությունն հաստատող որոշումները),
- Դիմումները (բողոքները), գրանցման մատյանը, քվեարկության օրվա գրանցման գիրքը (կնքված մեկ ծրարով),

Տեղամասային ընտրական հանձնաժողովը մարզային ընտրական հանձնաժողովին կնքված վիճակում (հարկի մեջ տեղավորած) պետք է ներկայացնի.

- Ընտրողների միասնական ցուցակը,
- Ընտրողների հատուկ ցուցակը (նաեւ քվեարկության օրվա հատուկ ցուցակում գրանցված ընտրող(ներ)ի կողմից ներկայացված փաստաթղթերի ֆոտոպատճենները),
- Ընտրողների ցուցակի հավելվածը,
- Վերահսկիչ թերթիկները,
- Չօգտագործված քվեաթերթիկները.

- Փչացած քվեաթերթիկները,
- Ընտրական սուբյեկտի կողմից ստացված ձայն/քվեաթերթիկները,
- Անվավեր ճանաչված քվեաթերթիկները,
- Այլ ընտրական տեղամասերին պատկանող անվավեր քվեաթերթիկները,
- Չօգտագործված հատուկ ծրարները (առանձին ծրարով, չկնքված),
- Հանձնաժողովի կնիքը,
- Գրանցողների կնիքները,
- Մարկիրացման ներկը եւ մարկիրացման ստուգման ուլտրամանուշակագույն լապտերիկը,
- Հիմնական եւ տեղափոխվող քվեատուփերը,
- Գաղտնի քվեարկության խցիկները,
- Ընտրական տեղամասի ցուցանակը,
- Պատճենահանման սարքը

Մարզային ընտրական հանձնաժողովում տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրական փաստաթղթերի հանձնման ժամանակ դկազնվում է ընդունման-հանձնման արձանագրություն, որտեղ նշվում է ընտրական փաստաթղթի անվանումը եւ քանակությունը. Արձանագրությունը ստորագրում են ընտրական փաստաթղթերը հանձնող եւ ընդունող անձինք.

**Հիշեցեք.**

*Արձանագրության մեկական օրինակ մնալու է հանձնողի եւ ընդունողի մոտ.*

**ԳԼՈՒԽ XIX. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԴԻՄՈՒՄՆԵՐՆ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԸ**

Տեղամասային ընտրական հանձնաժողովը քննարկում է ընտրությունների գործընթացի եւ քվեարկության նախապատրաստության հետ կապված դիմումներն ու բողոքները ու իր իրավասությունների շրջանակներում, ընդունում է համապատասխան որոշումներ.

Քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն քվեարկության օրը ընտրական գործընթացի կապակցությամբ դիտողություններ, բողոքներ եւ նկատողություններ ներկայացնել գրանցման գրքում (10-րդ եւ հաջորդ էջերում). Գրանցման գրքում գրանցում կատարած անձը պարտավոր է նշել իր անուն-ազգանունը, հասցեն՝ ըստ Վրաստանի քաղաքացու գրանցման վկայականի.

Ոչ ոք իրավասու չէ արգելքներ հարուցել քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձին գրանցման գրքում նկատողություններ, դիտողություններ եւ բողոքներ կատարելու հարցում.

**Հիշեցեք.**

Տեղամասային ընտրական հանձնաժողով մուտք գործած դիմում/բողոքների գրանցումը գրանցման գրքում պարտադիր է, իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցման մատյանում եւ դիմորդին/ բողոքարկողին հանձնվելիք տեղեկանքում նշվում է դիմում/բողոքը ընդունելու ամսաթիվը եւ ժամանակը.

**Դիմումներ եւ բողոքներ քվեարկության ընթացքում հայտնաբերված խախտումների կապակցությամբ**

Քվեարկության ընթացքում հայտնաբերված խախտումների մասին դիմումները (բողոքները) ընտրական տեղամասում պետք է ձեւակերպվեն օրենքի խախտման հայտնաբերումից անմիջապես հետո քվեարկության օրվա ժամը 7.00-ից մինչեւ քվեատուփի բացումը.

**Հիշեցեք.**

Դիմումը (բողոքը) քվեարկության օրը հայտնաբերված խախտումների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալին կամ հանձնաժողովի քարտուղարին պետք է հանձնել մինչեւ քվեատուփի բացումը.

Հանձնաժողովի նախագահը կամ նախագահի տեղակալը պետք է անհապաղ իրականացնի համապատասխան արձագանք եւ վերացնի հայտնաբերված խախտումը.

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չի ընդունում եւ չի գրանցում դիմումը (բողոքը), ապա դիմորդը վերոնշյալ խախտման եւ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից դիմումը ընդունելուց հրաժարվելու կապակցությամբ, իրավասու է դիմելու մարզային ընտրական հանձնաժողովին.

**Դիմումներ եւ բողոքներ ձայների հաշվարկման եւ քվեարկության արդյունքների հանրագումարման ժամանակ հայտնաբերված խախտումների կապակցությամբ**

➤ Դիմումը (բողոքը) ձայների հաշվարկման եւ քվեարկության արդյունքների հանրագումարման գործընթացում հայտնաբերված խախտումների մասին եւ քվեարկության արդյունքների վերստուգման կամ անվավեր ճանաչելու պահանջով, պետք է ձեւակերպված լինի մինչեւ քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության հաստատումը.

Վերոնշյալ դիմումը (բողոքը) տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի կողմից գրանցվում է քվեարկության օրվա գրանցման գրքում (դիմորդին հանձնվում է տեղեկանք) եւ տեղամասային ընտրական հանձնաժողովի կամ դիմորդի կողմից հանձնվում է մարզային ընտրական հանձնաժողովին մինչեւ քվեարկության հաջորդ օրվա ժամը 18-ը.

Դիմումի (բողոքի) մեջ պետք է նշվի.

- Դիմումի (բողոքի) կազմման ամսաթիվը եւ ժամանակը,
- Դիմորդի անուն, ազգանունը եւ հասցեն,
- Ընտրական տեղամասի համարն եւ հասցեն,
- Խախտման էությունը եւ դրա կատարման ժամանակը,
- Վկայի առկայության դեպքում նրա անուն, ազգանունը եւ գրանցման վայրը,
- Խախտողի հայտնաբերման դեպքում նրա այն տվյալները, որոնք հնարավոր է եղել պարզել,
- Խախտողի բացատրությունը (նմանի առկայության դեպքում)
- Լրացուցիչ այլ տեղեկատվություն

**Չիշեցեք.**

Վերոնշյալ ժամկետների խախտումով ներկայացված դիմումները (բողոքները) չեն քննարկվի.

Հանձնաժողով մուտք գործո՞՞ դիմումները (բողոքները) հավաքվում են մի ժրարի մեջ եւ կցվում է մարզային ընտրական հանձնաժողովին հանձնվելիք փաստաթղթերին.

**ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀՈՍՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂԸ**

*Ձեր պարտքն է ծառայել ընտրողներին*

*Եթե ընտրական գործընթացի որեւէ արարողությունն ձեզ համար պարզ չէ, ապա բացատրությունների համար դիմեք հանձնաժողովի նախագահին*

Նախընտական ժամանակաշրջանում ընտրական տեղամասում փակցված քարոզչական նյութերը հանձնաժողովի անդամները պետք է հանեն մինչև քվեարկության օրվան նախորդող օրվա ժամը 24-ը.

1. Կարգավորեք ընտրական տեղամաս մուտք գործող ընտրողների հոսքը.
  - հետեւեք, որ հերթում կանգնած ընտրողները պահպանեն կարգուկանոն,
  - առանց հերթի թողեք անցնեն տարեց, հիվանդ եւ հղի ընտրողները,
  - ընտրողների շարքում գտեք հաշմանդամներին, ովքեր առանձնակի վերաբերմունքի կարիք ունեն եւ նրանց ուղարկեք հանձնաժողովի նախագահի մոտ,
  - ընտրողներին առաջարկեք վերստուգեն իրենց ազգանունները ընտրական տեղամասում փակցրած միասնական եւ հատուկ ցուցակներում,
2. Ընտրողից պահանջեք, որ նա ներկայացնի անձն հաստատող հետեւյալ փաստաթղթերից որեւէ մեկը.
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձնական վկայականը,
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձնագիրը.

Եթե ընտրողի մոտ չի լինի անձն հաստատող փաստաթղթերից ոչ մեկը, նրան բացատրեք, որ նա չի կարող մասնակցել քվեարկությանը. Խնդրեք, որ նա հեռանա ընտրական տեղամասից եւ վերադառնա այն դեպքում, երբ կունենա անձն հաստատող որեւէ փաստաթուղթ,

3. Ուլտրամանուշակագույն լապտերիկով ստուգեք, ընտրողի մոտ երեւում է արդյոք մարկիացում. Եթե մարկիացումը հայտնվում է, ապա ընտրողի ով լինելու մասին տեղեկացնում ենք հանձնաժողովի քարտուղարին, որը ընտրողի անուն-ազգանունը կրանգցի գրանցման գրքում. Ընտրողից պահանջեք, որ նա հեռանա ընտրական տեղամասից.
4. Հետեւեք քվեարկության շինությունում գտնվող ընտրողների քանակությանը. Թույլ չտաք, որ ընտրողները քվեարկության շինությունում կամ իրենց համար նախատեսված գրանցման սեղանի մոտ միաժամանակ կանգնած լինի երկուսից ավելի ընտրող.
5. Ընտրողին ցույց տվեք, թե գրանցման որ սեղանն է նախատեսված նրա համար (ընտրողը պետք է մոտենա գրանցման այն սեղանին, որն պատկանում է ընտրողի՝ ցուցակում ազգանվան առաջին տառին).

**Քվեարկության ավարտը.**

1. Ժամը 20.00-ին, քվեարկության ավարտից հետո, հերթում կանգնած ընտրողներից պահանջեք, որ մուտք գործեն ընտրական տեղամասի ներսը եւ փակեք դռները. Ժամը 20.00-ից հետո եկած ընտրողները քվեարկությանը չեն մասնակցում.
2. Նախագահին տեղեկացրեք հերթում կանգնած ընտրողների թիվը, քարտուղարին հաղորդեք նրանց անուն-ազգանունը, որն այդ տեղեկատվությունը գրանում է գրանցման գրքում.

***Քվեարկության ավարտից հետո դուք կարող եք կատարել հաշվարկիչի գործառույթ կամ այլ առաջադրանք՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.***

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՂՈՂ

### *Ձեր պարտքն է ծառայել ընտրողներին*

*Եթե ընտրական գործընթացի որեւէ արարողություն ձեզ համար պարզ չէ, ապա բացատրությունների համար դիմեք հանձնաժողովի նախագահին*

1. Ընտրողից պահանջեք ներկայացնի անձն հաստատող հետեւյալ փաստաթղթերից որեւէ մեկը.
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձնական վկայականը,
  - ✓ Վրաստանի քաղաքացու անձնագիրը.
2. Ստուգեք, ընտրողը գրանցված է արդյոք ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակներում
  - Եթե ընտրողը գրանցված չէ ընտրողների ցուցակում, սակայն ընտրողը ներկայացրեց համապատասխան փաստաթուղթ (գրանցում անձնագրում սահմանը հատելու մասին, տեղեկանք ստացիոնար բուժհիմնարկից, կալանքից ազատվելու մասին), ապա այդ ընտրողին գրանցեք ընտրողների հատուկ ցուցակում եւ ներկայացրած փաստաթղթերի ֆոտո.ատճենները հանձնեք տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին.
3. Եթե ընտրողը գրանցված է ընտրողների ցուցակում, իրականացրեց ընտրողի մարկավորումը (անգույն ներկը քսեցեք ընտրողի աջ ձեռքի ցուցամատի կամ բութ մատի եղունգին, վերոնշյալ գործողությունը կատարելու հնարավորության բացակայության դեպքում՝ ձեռքի մյուս մատների եղունգին). Եթե ընտրողը հրաժարվում է մարկավորումից, նրան պարզաբանեք, որ առանց մարկավորման նա ընտրություններին մասնակցել չի կարող, նաեւ նշեք, որ մարկավորումը անվտանգ է առողջության համար. Եթե ընտրողը այդ դեպքում էլ հրաժարվում է մարկավորումից, նրան քվեաթերթիկ չհանձնեք.
4. Միասնական եւ հատուկ ցուցակի համապատասխան սյունակում նշեք ընտրողի անձնական համարը.
5. Քվեաթերթիկը հաստատեք դրա ետեւում, հատուկ տեղում ստորագրությամբ.
6. Քվեաթերթիկը հաստատեք դրա ետեւում, դրա համար հատուկ տեղում կնքումով.
  - քվեաթերթիկի նախօրոք հաստատումը (ստորագրումն ու կնքումը) անթույլատրելի է.
7. Քվեաթերթիկի հանձնումը հաստատեք ընտրողների ցուցակում ստորագրությամբ.
8. Ընտրողից պահանջեք հաստատի քվեաթերթիկ(ներ)ի ստացումը ընտրողների ցուցակում ստորագրությամբ.
9. Ընտրողին հանձնեք քվեաթերթիկները.
  - Եթե հատուկ ցուցակում գրանցված ընտրողի գրանցման վայրը չի պատկանում տվյալ տեղական մեծամասնական ընտրական մարզին, նրան հանձնեք միայն համամասնական քվեաթերթիկը.
10. Ընտրողին ասացեք, որ նա մուտք գործի գաղտնի քվեարկության խցիկ.

### Փչացած քվեաթերթիկ

Եթե դուք կամ ընտրողը փչացրիք քվեաթերթիկը, այդ մասին տեղեկացրեք հանձնաժողովի նախագահին, որը ընտրողի ներկայությամբ կտրում է փչացած քվեաթերթիկի անկյունը, գրում. «Փչացած է» եւ ստորագրում. Հանձնաժողովի քարտուղարը փչացած քվեաթերթիկը դնում է առանձին.

- Ընտրողին հանձնեք ստորագրված եւ կնքված նոր քվեաթերթիկ.

***Քվեարկության ավարտից հետո դուք կարող եք կատարել հաշվարկիչի գործառույթ կամ այլ առաջադրանք՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.***



## ՔՎԵԱՏՈՒՓԻ ԵՎ ԾՐԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՅՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՍԸ

### *Ձեր պարտքն է ծառայել ընտրողներին*

*Եթե ընտրական գործընթացի որեւէ արարողություն ձեզ համար պարզ չէ, ապա բացատրությունների համար դիմեք հանձնաժողովի նախագահին*

1. Մշտապես վերահսկում եք քվեատուփը եւ հատուկ ծրարները. Թույլ չտաք քվեատուփի մոտ միաժամանակ մեկից ավելի ընտրողի մոտեցում.
2. Փակված պահեք քվեատուփի հատուկ ծրարների զցման բացվածքը.
3. Գաղտնի քվեարկության խցիկից դուրս գալուց հետո, ընտրողին նշեք, որ նա վերցնի հատուկ ծրար եւ դրա մեջ դնի քվեաթերթիկները (միայն ընտրողը իրավունք ունի քվեաթերթիկները տեղավորել հատուկ ծրարի մեջ).
4. Համոզվեք, որ մինչեւ քվեատուփին մոտենալը ընտրողի ձեռքին կար միայն մեկ հատուկ ծրար.
5. Քվեատուփի մեջ հատուկ ծրարը զցելուց հետո, ընտրողին ցույց տվեք ելքը. Ընտրողը քվեարկության շինության մեջ կարող է գտնվել միայն ձայն տալու համար անհրաժեշտ ժամանակահատվածում.

Դուք պարտավոր եք մշտապես վերահսկել եւ անուշադրության չմատնել քվեատուփը. Հանձնաժողովի նախագահին տեղեկացրեք, եթե անհրաժեշտ է դուրս գալի քվեարկության շինությունից եւ նրան խնդրեք ժամանակավորապես նշանակի փոխարինողի.

Եթե քվեատուփի կնիքի ամբողջությունը խախտվել է, ապա.

- անհապաղ տեղեկացրեք հանձնաժողովի նախագահին,
- հանձնաժողովի իրավազոր է կանգնեցնել քվեարկության գործընթացը մինչեւ քվեատուփի կրկնական կնքումը,
- ընտրողը հատուկ ծրարը չի զցելու քվեատուփի մեջ քանի դեռ հանձնաժողովը պաշտոնապես չի հայտարարել քվեարկության վերսկսման մասին.

***Քվեարկության ավարտից հետո դուք կարող եք կատարել հաշվարկիչի գործառույթ կամ այլ առաջադրանք՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.***

## ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ՔՎԵԱՏՈՒՓԻ ՈՒՂԵԿՑՈՐԴՆԵՐԸ

*Ձեր պարտքն է ծառայել ընտրողներին*

*Եթե ընտրական գործընթացի որեւէ արարողություն ձեզ համար պարզ չէ, ապա բացատրությունների համար դիմեք հանձնաժողովի նախագահին*

- Պարզեք տեղափոխվող քվեատուփի ուղերթը՝ ըստ ընտրողների ցուցակի հավելվածի.
- Հանձնաժողովի նախագահին տեղեկացրեք եւ ներկայացրեք տեղափոխվող քվեատուփի երթուղու մասին.
- Ստուգեք, ունե՞ք արդյոք հենձնաժողովի նախագահի հեռախոսահամարը. Ձեր հեռախոսահամարը հայտնե՞ք հանձնաժողովի նախագահին.
- Ստուգեք, որ ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակից դուրս գրված ընտրողների դիմաց նշվի ընտրողների ցուցակի հավաքված տեղափոխվելու մասին, դա հաստատվելու է հանձնաժողովի նախագահի եւ քարտուղարի ստորագրությամբ.
- Մինչեւ քվեարկության շինությունից հեռանալը, դուք պարտավոր եք ստուգել, ունե՞ք արդյո՞ք ստորել բերված բոլոր նյութերը.
  - ✓ ընտրողների ցուցակի հավելվածը,
  - ✓ վաղօրոք ստորագրությամբ եւ կնիքով հաստատված քվեաթերթիկներ,
  - ✓ հատուկ ծրարներ
  - ✓ կնքված տեղափոխվող քվեատուփ, որտեղ պետք է դրված լինի վերահսկիչ թերթիկը,
  - ✓ այլ նյութեր (գրիչներ, թերթիկներ, ընտրություններին մասնակից սուբյեկտների ցուցակը, քվեաթերթիկի լրացման հրահանգը, քաղվածք քվեաթերթիկը անվավեր ճանաչելու մասին օրենքից, սոսնձվող ժապավեն (սկոտչ).
- Տեղափոխվող քվեատուփի միջոցով քվեարկությունը.
  - ✓ տեղափոխվող քվեատուփի միջոցով քվեարկությունը սկսվում է ժամը 9.00-ից ոչ շուտ,
  - ✓ ընտրողից պահանջեք ներկայացնել անձն հաստատող փաստաթղթերից որեւէ մեկը.
    - Վրաստանի քաղաքացու անձնական վկայականը,
    - Վրաստանի քաղաքացու անձնագիրը
  - ✓ ընտրողի ազգանվան դիմաց համապատասխան սյունակում նշեք ընտրողի անձնական համարը,
  - ✓ ընտրողին հանձնեք քվեաթերթիկը,
    - եթե ցուցակի հավելվածում գրանցված ընտրողի գրանցման վայրը չի պատկանում տվյալ տեղական ընտրական մարզին, նրան հանձնեք միայն համամասնական քվեաթերթիկը.
  - ✓ ընտրողից պահանջեք, որ նա ընտրողների ուցակում իր ազգանվան դիմաց ստորագրությամբ հաստատի քվեաթերթիկի ստացումը,
  - ✓ ընտրողների ցուցակի հավելվածի համապատասխան սյունակում ստորագրությամբ հաստատեք քվեաթերթիկի հանձնումը,
  - ✓ քվեաթերթիկի լրացումից հետո ընտրողին հանձնեք մեկ հատուկ ծրար եւ նշեք, որ դրա մեջ դնի ծավված քվեաթերթիկը (միայն ընտրողը ունի քվեաթերթիկը հատուկ ծրարի մեջ դնելու իրավունք),
  - ✓ ընտրողից պահանջեք, որ նա հատուկ ծրարը գցի քվեատուփի մեջ

## **Փչացած քվեաթերթիկ**

Եթե ընտրողի կամ հանձնաժողովի անդամի մոտ քվեաթերթիկը փչացավ, ապա հանձնաժողովի անդամը.

- ✓ ընտրողի ներկայությամբ կտրելու է փչացած քվեաթերթիկի անկյունը,
- ✓ փչացած քվեաթերթիկի վրա գրելու է «Փչացած է» եւ պահի առանձին,
- ✓ ընտրողին պետք է հանձնի նոր քվեաթերթիկ

Դուք պարտավոր եք մշտապես վերահսկել տեղափոխվող քվեատուփը. Տեղափոխվող քվեատուփի անուշադրության չպետք է մատնել. Այդ դեպքում, եթե չեք կարողանում հետեւել տեղափոխվող քվեատուփին, ապա ժամանակավորապես կանգնեցրեք քվեարկությունը, կազմեք համապատասխան արձանագրություն եւ ներկաներին խնդրեք, որ այն ստորագրեն.

## **Եթե խախտվում է տեղափոխվող քվեատուփի կնիքի ամբողջությունը.**

- եթե հնարավոր է, տեղեկացրեք հանձնաժողովի նախագահին,
- կազմեք համապատասխան արձանագրություն եւ ներկաներին խնդրեք այն ստորագրել,
- ժամանակավորապես դադարեցրեք քվեարկության գործընթացը տեղափոխվող քվեատուփի միջոցով մինչեւ քվեատուփի կրկնական կնքումը,
- ընտրական տեղամաս վերադառնալուն պես հանձնաժողովի քարտուղարին տեղեկացրեք տեղափոխվող քվեատուփի կնիքի խախտման պատճառների, կրկնական կնքման ժամանակի մասին եւ նրան հանձնեք արձանագրությունը. Այդ տեղեկատվությունը հանձնաժողովի քարտուղարը գրանցելու է քվեարկության օրվա գրանցման գրքում.

## **Տեղափոխվող քվեատուփի միջոցով քվեարկության ավարտը**

Տեղափոխվող քվեատուփի միջոցով քվեարկությունը ավարտվում է ժամը 19.00-ին. Քվեարկության ավարտից հետո, կնքեք տեղափոխվող քվեատուփի՝ հատուկ ծրարները գցելու բացվածքը՝ թղթով եւ սունձվող ժապավենով (սկոտչով).

Տեղափոխվող քվեատուփը, ընտրական փաստաթղթերի հետ միասին, ընտրական տեղամաս է վերադարձվում ժամը 20.00-ից ոչ ուշ.

Տեղափոխվող քվեատուփի միջոցով ձայն տալուց հետո մնացած չօգտագործված քվեաթերթիկներն ու հատուկ ծրարները հանձնվում է հանձնաժողովի նախագահին կամ հանձնաժողովի քարտուղարին. Նախագահը կտրում է չօգտագործված քվեաթերթիկների անկյունները, գրում է «Փչացած է», ստորագրում եւ դնում է առանձին.

***Քվեարկության ավարտից հետո դուք կարող եք կատարել հաշվարկիչի գործառույթ կամ այլ առաջադրանք՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.***

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ

*Ձեր պարտքն է ծառայել ընտրողներին*

*Եթե ընտրական գործընթացի որեւէ արարողություն ձեզ համար պարզ չէ, ապա բացատրությունների համար դիմեք հանձնաժողովի նախագահին*

1. Քվեարկությունը սկսվելուց հետո մեկ ժամվա ընթացքում վերահսկեք քվեարկության գործընթացը եւ օգնեք ընտրողների գրանցողին.
2. Ուշադրություն դարձրեք, քվեարկության շինությունում կա այնպիսի ընտրող, որն անկախ չի կարող լրացնել քվեաթերթիկը.
3. Փոխարինեք (ժամանակավորապես) հանձնաժողովի ցանկացած անդամի, այդ թվում նաեւ հանձնաժողովի նախագահին եւ քարտուղարին, եթե նրանք անհրաժեշտության դեպքում թողնում են քվեարկության շինությունը.
4. Կարգավորեք ընտրողների կողմից քվեարկության ընթացակարգի հերթականության պահպանումը.
5. Համոզվեք, որ քվեարկության շինությունում գտնվում է ընտրական սուբյեկտի միայն մեկ ներկայացուցիչ.
6. Հետեւեք, որ դիտորդները, մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների ու ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները չգերազանցեն իրենց իրավունքները.

*Քվեարկության ավարտից հետո դուք կարող եք կատարել հաշվարկիչի գործառույթ կամ այլ առաջադրանք՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.*

## ՏԵՂԱՍԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

*Ձեր պարտքն է ծառայել ընտրողներին*

*Եթե ընտրական գործընթացի որեւէ արարողություն ձեզ համար պարզ չէ, ապա բացատրությունների համար դիմեք հանձնաժողովի նախագահին*

1. Ստուգեք հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կրծքանշանը.
2. Ընտրական տեղամասի բացման ժամանակ քվեարկության օրվա գրանցման գրքում նշեք.
  - քվեարկության շինությունում գտնվող հանձնաժողովի անդամների, դիտորդների, ներկայացուցիչների անուն-ազգանունները, նշանակած սուբյեկտին եւ ստորագրությամբ դա հաստատում (1-ին եւ 2-րդ էջերին),
  - հանձնաժողովի անդամների միջեւ գործառույթների բաժանման վիճակահանության արդյունքները հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի իրականացվելիք գործառույթը (3-րդ էջ),
  - հանընկնում է արդյոք իրականում ստացված քվեաթերթիկների եւ հատուկ ծրարների քանակությունը ընդունման-հանձնման արձանագրությունում տրված քանակությամբ,
  - վիճակահանությամբ յուրաքանչյուր գրանցողին հանձնվելիք գրանցողի կնիքի կողը (3-րդ էջ),
  - քվեատուփի կնքման ժամանակը, քվեատուփերի կնիքների անհատական համարները, առաջին ընտրողի անուն-ազգանունը, գրանցման վայրը, անձնական վկայականի համարը եւ անձնական համարը (4-րդ էջ),
3. Հանձնաժողովի նախագահի ցուցումով մինչեւ քվեարկության սկիզբը, լրացրեք քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության (արձանագրության բլոկնոտի վերջին էջը) առաջին եւ 4-րդ սյունակները. Նշյալ տվյալները գրանցեք քվեարկության օրվա գրանցման գրքում (6-9-րդ էջեր) եւ ցուցադրական արձանագրությունում.
4. Ժամը 12.00-ին եւ 17.00-ին յուրաքանչյուր գրանցողի հետ հաշվեք ընտրողների ցուցակներում քվեարկությանը մասնակից ընտրողների ստորագրությունների քանակությունը եւ դրանց գումարը գրանցեք գրանցման գրքում, հանրագումարային արձանագրություններում եւ ցուցադրական արձանագրությունում.
5. Քվեարկության օրվա գրանցման գրքում նշեք քվեատուփերի կրկնական կնքման դեպքերը՝ ժամանակի նշումով.
6. Քվեարկությունների օրվա գրանցման գրքում գրանցեք քվեարկության դադարեցման կամ ընդհատման պատճառները, քվեարկության վերսկսման ժամանակը (10-րդ կամ հաջորդ էջերին).
7. Քվեարկության օրվա գրանցման գրքում գրանցեք բոլոր մուտք գործած դիմումները (բողոքները).
8. Հանձնաժողովի անդամների միջեւ հաշվարկողների գործառույթների վիճակահանությամբ բաժանման արդյունքները (3-րդ էջ).
9. Հանձնաժողովի նախագահի ցուցումով, մինչեւ քվեատուփի բացումը, լրացրեք քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության 2-րդ, 3-րդ, 5-րդ եւ 6-րդ սյունակները. Նշյալ տվյալները գրանցեք քվեարկության օրվա գրանցման գրքում եւ ցուցադրական արձանագրությունում.
10. Քվեարկության օրվա գրանցման գրքում գրանցեք ձայների հաշվարկման ժամանակ քվեարկության շինությունում գտնվող անձանց ով լինելը (10-րդ եւ հաջորդ էջերին).
11. Հանձնաժողովի նախագահի ցուցումով լրացրեք քվեարկության արդյունքների հանրագումարային եւ ցուցադրական արձանագրությունները.
12. Գրանցման գրքում նշեք անվավեր, այլ ընտրական տեղամասին պատկանող քվեաթերթիկների քանակությունը (այս տեղակագրությունը գրանցեք միայն գրանցման գրքում).
13. Ստորագրեք քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունը. Հետեւեք, որ հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրեն քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունը, որն հետո հաստատվելու է հանձնաժողովի կնիքով.

14. Հետեւեք, որ հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրեն (ներառյալ դուք) քվեարկության օրվա գրանցման գիրքը, որը հետո հաստատվելու է հանձնաժողովի կնիքով.
15. Փակեք գրանցման մատյանը եւ ստորագրեք.
16. Հետեւեք, որ հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրեն (ներառյալ դուք) հանձնաժողովի կնիքի կնքման ծրարը.

*Քվեարկության ավարտից հետո դուք կարող եք կատարել հաշվարկիչի գործառույթ կամ այլ առաջադրանք՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.*

## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՐԸ

### Ձեր պարտքն է ծառայել ընտրողներին

*Եթե ընտրական գործընթացի որեւէ արարողություն ձեզ համար պարզ չէ, ապա բացատրությունների համար դիմեք մարզային հանձնաժողովի նախագահին*

- Ընտրական տեղամասը բացեք ժամը 07.00-ին.
  - ✓ այն դեպքում, եթե ընտրական տեղամաս հայտնվեց տեղամասային ընտրական հանձնաժողովի 5-ից պակաս անդամ, ընտրական տեղամասը չբացեք եւ սպասեք հանձնաժողովի անդամների գալուին.
- Քարտուղարին հանձնեք քվեարկության օրվա գրանցման գիրքը, գրանցման մատյանը, քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունները եւ ցուցադրական արձանագրությունները.
- Գրանցման գրքում ստորագրությամբ հաստատեք ընտրական տեղամասում գտնվելը.
- Դիտորդներից, ընտրական սուբյեկտների եւ մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջացների ներկայացուցիչներից պահանջեք ներկայացնել հավատարմագրության վկայականները (կրճաբանչանները).
- Ստուգեք այն ծրարի ամբողջությունը, որտեղ դրված է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը եւ բացեք այն.
- Համեմատեք հանձնաժողովի անդամների թիվը եւ կատարվելիք գործառույթների քանակությունը.
- Անցկացրեք վիճակահանություն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջեւ գործառույթների բաժանման նպատակով (դուք վիճակահանությանը չեք մասնակցում).
- Հայտարարեք ընտրողների թվաքանակը ընտրողների միասնական (1),, հատուկ (2) ցուցակներում եւ ընտրողների ցուցակի (3) հավելվածում.
- Ստուգեք ստացված քվեաթերթիկների եւ հատուկ ծրարների փաթեթների ամբողջությունը. Ընդունման-հանձնման արձանագրության հիման վրա, ստուգեք եւ հայտարարեք ստացված քվեաթերթիկների եւ հատուկ ծրարների քանակությունը.
- Այբբենական կարգով բաժանեք ընտրողների միասնական ցուցակը եւ այն հանձնեք գրանցողներին.
  - ✓ գրանցման յուրաքանչյուր սեղանի մոտ փակցրեք ընտրողների այբբենական հաջորդականությամբ (սեղանի վրա դրված ցուցակներին համապատասխան).
- Գրանցողներից որեւէ մեկին հանձնեք ընտրողների հատուկ ցուցակը.
- Գրանցողներին հանձնեք քվեաթերթիկների մեկական բլոկնոտ -ստորագրեք բլոկնոտի առաջին թերթի վրա).
- Ստուգեք այն ծրարի ամբողջությունը, որտեղ դրված են գրանցողների հատուկ կնիքները, անցկացրեք վիճակահանություն գրանցողներին հատուկ կնիքների հանձնման նպատակով եւ ամեն մի գրանցողի հանձնեք հատուկ կնիք.
- Ամեն մի գրանցողի հանձնեք մարկիրացման ներկը.
- Հոսքը կարգավորողին հանձնեք մարկիրացումը ստուգելու ուլտրամանուշակագույն լապտերիկը.
- Քվեատուփի եւ հատուկ ծրարների վերահսկիչ հանձնաժողովի անդամին հանձնեք հատուկ ծրարներն ու հիմնական քվեատուփը.
- Համոզվեք, որ գաղտնի քվեարկության խցիկը եւ ընտրական տեղամասը համապատասխանաբար կարգավորված է.
- Առաջին ընտրողի գալուց հետո (սակայն ժամը 8.00-ից ոչ շուտ) ընտրական փաստաթղթերի միջից հանեք երեք վերահսկիչ թերթիկ եւ լրացման համար հանձնեք տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին, ստորագրեք վերահսկիչ թերթիկները.
  - ✓ ստուգեք առաջին ընտրողի վրանցման վայրը պատկանում է արդյոք տվալ ընտրական տեղամասի սահմաններին.

- Համոզվեք, որ քվեատուփերը դատարկ են եւ կնքեք հիմնական եւ տեղափոխվող քվեատուփերը հատուկ համար ունեցող քուղերով (քուղերի համարները տեղեկացրեք քարտուղարին)։
- Քվեատուփերը կնքելուց անմիջապես հետո պահանջեք վերահսկիչ թերթիկները. երրորդ վերահսկիչ թերթիկը պահեք (մինչեւ քվեատուփի բացումը)։
- Ժամը 09.00-ին վիճակահանությամբ տեղափոխվող քվեատուփի միջոցով քվեարկությունը իրականացնող հանձնաժողովի անդամին հանձնարարեք սկսի քվեարկությունը եւ նրան հանձնեք անհրաժեշտ ընտրական փաստաթղթեր/գույքը։
- Տեղափոխվող քվեատուփի միջոցով քվեարկության իրականացման համար մեքենայի անհրաժեշտության դեպքում, անցկացրեք վիճակահանություն երկու դիտորդների հայտնաբերման նպատակով, որոնք տեղ են զբաղեցնելու մեքենայում։
- Ժամը 12.00-ին եւ 17.00-ին մարզային ընտրական հանձնաժողովին տեղեկացրեք քվեարկությանը մասնակից ընտրողների թվաքանակը։
- Վերահսկեք քվեարկության գործընթացը եւ անհրաժեշտության դեպքում օգնեք ընտրողների գրանցողներին։
- Քննարկեք մուտք գործած բողոք/դիմումները, հնարավորության սահմաններում փորձեք կարգավորել հիմնախնդիրը։
- Եթե ընտրողի կամ գրանցողի մոտ քվեաթերթիկը փչացավ, ապա ընտրողի ներկայությամբ կտրեք փչացած քվեաթերթիկի անկյունը, գրեք «Փչացած է» եւ ստորագրեք. Փչացած քվեաթերթիկը հանձնեք հանձնաժողովի քարտուղարին, որ պահի առանձին։
- Հետեւեք, կա արդյոք քվեարկության շինությունում ընտրող, որն անկախ չի կարող լրացնել քվեաթերթիկը։
- Կարգավորեք ընտրողների կողմից քվեարկության ընթացակարգի հերթականության պահպանումը։
- Հետեւեք, որ դիտորդները, մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների ու ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները չիզեռազանցեն իրավունքները։
- Ստուգեք, որ քվեարկության շինությունում գտնվեն դիտորդական կազմակերպությունների, ընտրական սուբյեկտների միայն մեկական ներկայացուցիչներ։
- Պահպանեք կարգուկանոնը քվեարկության շինությունում, անհրաժեշտության դեպքում կարգուկանոնի պահպանման համար դիմեք ոստիկանության աշխատակցին (որը քվեարկության շինությունը կարգուկանոնի վերականգնումից հետո պետք է թողնի)։
- Եթե ժամը 20.00-ին հերթում կանգնած են ընտրողներ, ապա հանձնաժողովի անդամներից մեկին հանձնարարեք գրանցի հերթում կանգնած ընտրողների անուն-ազգանունները։
- Ժամը 20.00-ին (եթե հերթում կանգնած են ընտրողներ, ապա վերջին ընտրողի կողմից ձայնը տալուց հետո) հայտարարում եք, որ քվեարկությունը ավարտված է։
- Ապահովում եք, որ բոլոր անձինք, բացառությամբ քվեարկության շինությունում գտնվելու իրավունք ունեցող անձանցից, հեռանան ընտրական տեղամասից։
- Անցկացրեք վիճակահանություն հաշվարկողներին հայտնաբերելու նպատակով (դուք վիճակահանությանը չեք մասնակցում)։
- Հաշվարկողներին ցուցում տվեք, որ հաշվեն.
  - ✓ ընտրողների թվաքանակը ընտրողների հատուկ ցուցակում,
  - ✓ ստորագրությունների քանակությունը ընտրողների ցուցակներում (քարտուղարը բոլոր տվյալները պետք է գրանցի գրանցման գրքում, քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունում եւ ցուցադրական արձանագրությունում),
  - ✓ չօգտագործված քվեաթերթիկները,
  - ✓ փչացած քվեաթերթիկները։
- Բարձրաձայն հայտարարում եք արձանագրության մեջ նշվող բոլոր տվյալները։
- Հաշվարկիչներին ցուցում տվեք, որ փաթեթավորեն եւ կնքեն։



- ընտրողների ցուցակները (առանձին-առանձին)
  - չօգտագործված քվեաթերթիկները,
  - փչացած քվեաթերթիկները.
- Հաշվարկիչների հետ միասին ստորագրում եք ծրարները.
- Համեմատեք, համապատասխանում է արդյոք տեղափոխվող քվեատուփի կնիքի քուղի համարը գրանցման գրքում նշված համարի հետ.
- Հաշվարկիչներին ցուցում տվեք բացել տեղափոխվող քվեատուփը, համեմատեք տեղափոխվող քվեատուփի մեջ դրված վերահսկիչ թերթիկը պահվող վերադասիչ թերթիկի հետ.
- Հաշվարկիչներին ցուցում տվեք հաշվելու տեղափոխվող քվեատուփի մեջ գտնվող ծրարների քանակությունը եւ համեմատեն ընտրողների ցուցակի հավելվածում առկա ստորագրությունների քանակի հետ.
- Ստուգեցեք համապատասխանում է արդյոք հիմնական քվեատուփի կնիքի քուղի համարը գրանցման գրքում նշված համարի հետ.
- Հաշվարկիչներին ցուցում տվեք բացել հիմնական քվեատուփը, համեմատեք հիմնական քվեատուփում դրված վերահսկիչ թերթիկը պահվող վերահսկիչ թերթիկի հետ.
- Հաշվարկիչներին ցուցում տվեք իրար խառնեն տեղափոխվող եւ հիմնական քվեատուփերում առկա ծրարները եւ սկսեն տեսակավորումը.
- Վերահսկեք տեսակավորման գործընթացը եւ քվեաթերթիկների անվավերության դեպքերը.
- Քվեաթերթիկների տեսակավորման ավարտից հետո հանձնաժողովի անդամների հետ միասին քվեարկությանը որոշեք կասկածելի համարվող քվեաթերթիկների իսկության/անվավերության հարցը.
- Քվեաթերթիկների տեսակավորումից հետո հաշվարկողներին ցուցում տվեք հաշվեն.
  - ✓ անվավեր քվեաթերթիկները,
  - ✓ յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի օգտին տրված ձայն/քվեաթերթիկները,
  - ✓ բոլորի դեմ տրված ձայն/քվեաթերթիկները.
- Քարտուղարին ցուցում տվեք ավարտել արձանագրությունների լրացումը.
- Արձանագրության բալանսի չհաստատման դեպքում, հաշվարկիչներին ցուցում տվեք վերահաշվարկել վերոնշյալ ընտրական փաստաթղթերը.
- Քվեաթերթիկների տեսակավորումից հետո հաշվարկիչներին ցուցում տվեք կապեն եւ կնքեն.
  - անվավեր քվեաթերթիկները, առանձին կնքեն անվավեր, այլ ընտրական տեղամասերին պատկանող քվեաթերթիկները,
  - յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի օգտին տրված քվեաթերթիկները,
  - բոլորի դեմ տրված քվեաթերթիկները.
- Հաշվարկիչների հետ միասին ստորագրեք կնքված ծրարները.
- Որոշմամբ հաստատեք քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունը.
- Հանձնաժողովի բոլոր անդամներին ցուցում տվեք, որ ստորագրեն քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրությունը.
- Պահանջի դեպքում հանձնեք արձանագրության N 2 թերթի քսերոպատճենը կուսակցության/ընտրական դաշինքի/նախաձեռնող խմբի ներկայացուցիչներին եւ դիտորդ կազմակերպությունների դիտորդներին.տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով եւ ստորագրությամբ (նաեւ քարտուղարի ստորագրությամբ) հաստատված քսերոպատճենը.
- Հաշվարկիչներին ցուցում տվեք կնքել ընտրական մյուս փաստաթղթերը.
- Կնքված ընտրական փաստաթղթերը անձամբ հանձնեք մարզային ընտրական հանձնաժողովին
- Դուք կարող եք կատարել քվեատուփի եւ հատուկ ծրարների վերահսկիչի գործառույթները, եթե քվեարկության օրը հանձնաժողովի անդամների անբավարարություն չիմի.***

**ԳԼՈՒԽ XXI. ՎՐԱՍՏԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

**ՎՐԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ**

**Հոդված 162**

Ընտրություններում, հանրաքվեում կամ քի արտահայտման խոչընդոտում.

1. Ընտրություններում, հանրաքվեում կամ քի արտահայտման խոչընդոտումը - պատժվում է տուգանքով կամ ուղղիչ աշխատանքներով մինչև մեկ տարի ժամկետով կամ ազատության սահմանափակում մինչև երկու տարի ժամկետով, կամ նույն ժամկետով ազատազրկում.
2. Նույն գործողությունը իրականացված.
  - ա. ծառայական դիրքի կամ զենքի գործադրմամբ,
  - բ. խաբեությանմբ,
  - գ. բռնությամբ կամ բռնության սպառնալիքով,
  - դ. խմբային- պատժվում է տուգանքով կամ կալանքով՝ վեց ամիս ժամկետով կամ երեք տարի ազատազրկմամբ.

**Հոդված 163**

Ընտրական կամ հանրաքվեային հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելու համար, որը հանգեցնում է ընտրությունների, հանրաքվեի կամ ընտրական տեղամասում քվեարկության գործընթաի տապալման -

պատժվում է ուղղիչ աշխատանքներով մինչև 2 տարի ժամկետով կամ երկուսից մինչև հինգ ամիս կալանքով կամ մինչև չորս տարի ազատազրկմամբ.

**Հոդված 164**

Ընտրությունների, հանրաքվեի մասնակցին ձայն տալու գաղտնիության խախտման, ընտրական կամ հանրաքվեային հանձնաժողովի անդամի կամ նման հանձնաժողովի լիազորի կամ դիտորդ նշանակվածի կողմից ընտրական կամ հանրաքվեային փաստաթղթերի կեղծումը, ձայների կանխամտածված սխալ հաշվարկումը, ընտրությունների արդյունքները կանխամտածված սխալ հանրագումարումը կամ հանրաքվեի արդյունքների սխալ սահմանումը -

պատժվում է տուգանքով կամ մեկ տարվա ուղղիչ աշխատանքով կամ երկու տարի ազատազրկմամբ.

**ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՐԱՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ**

**Հոդված 174<sup>2</sup>**

Հավաքման կամ ցույցերի խանգարման համար ծառայական դրության օգտագործման ժամանակ

Հավաքման կամ ցույցերի, ինչիես նաեւ դրանց մասնակցության իրավունքների կիրարկման խոչընդոտումը ծառայական դրության օգտագործմամբ -

հանգեցնում է տուգանքի աշխատավարձի նվազագույն մեծության հիսունից մինչև հարյուրապատիկը.

**Հոդված 174<sup>3</sup>**

Ընտրական հանձնաժողովի աշխատանքին միջամտելը ընտրությունների կամ հանրաքվեի կամ հարցման անցկացման ժամանակ, որն արտահայտվում է ընտրական տեղամասերում ձայն տալու, խորհրդարանի կամ այլ ներկայացուցչական մարմնի անդամության թեկնածուի, ոկւսակցության կամ հանրաքվեի կազմակերպած նախաձեռնոխ խմբի գրանցման, ընտրական տեղամասում եւ մարզում ձայների հաշվարկման ու ընտրությունների, հանրաքվեի կամ հարցման ընդհանուր արդյունքների սահմանման կապակցությամբ գործողությունների կատարմանը խաչընդոտմոսը -

հանգեցնում է քաղաքացիների տուգանման երկուսից չորս նվազագույն աշխատավարձի չափով.

**Յոթերորդ 174<sup>4</sup>**

Ընտրական, հանրաքվեական կամ հարցումային հանձնաժողովների համար անհրաժեշտ նյութերի եւ տվյալների ներկայացումից հրաժարումը կամ դրանց որոշումների չկատարումը -

հանգեցնում է պաշտոնատար անձի տուգանման երկուսից հինգ նվազագույն աշխատավարձի չափով.

**Յոթերորդ 174<sup>5</sup>**

Քարոզչության անցկացումը ընտրությունների, հանրաքվեի կամ հարցման օրը.

Ընտրությունների, հանրաքվեի կամ հարցման օրը խորհրդարանի կամ այլ ներկայացուցչական մարմնի անդամության թեկնածուի կամ ընտրություններին մասնակից կուսակցության, հանրաքվեում կամ հարցման ժամանակ առաջադրած հարցի օգտին կամ դեմ քարոզչությունը անցկացում է -

հանգեցնում է քաղաքացիների տուգանման երկուսից չորս նվազագույն աշխատավարձի չափով.

**Յոթերորդ 174<sup>6</sup>**

Նախընտրական քարոզչության կամ քվեարկության համար հատկացված վայրում հրազեն կամ սառ զենքով կամ զինամթերքով ներկայանալը, եթե դա պայմանավորված չէ ծառայական պարտավորությունների կատարմամբ -

հանգեցնում է քաղաքացու տուգանման մեկից երեք նվազագույն աշխատավարձի չափով, իսկ պաշտոնատար անձին երկուսից հինգ նվազագույն աշխատավարձի չափով.